Azg
armenian daily
14 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2003 ԵՐԵՔՇԱԲԹԻ 186 (2871)

Էդուարդ Շեւարդնաձե. Շուտով Վրաստանը կմտնի ՆԱՏՕ եւ մեզ հետ կխոսեն ուրիշ լեզվով

ԹԲԻԼԻՍԻ, 13 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏՊՊԱՆ: «Ռուսաստանի հետ Վրաստանի հարաբերությունները չեն կարգավորվի այնքան ժամանակ, քանի դեռ ռուսական կողմից հայտարարություններ են հնչում հարեւան հանրապետություններին նախազգուշական հարվածներ հասցնելու հնարավորության մասին», հոկտեմբերի 10-ին Թբիլիսիում հայտարարել է Վրաստանի նախագահ Էդուարդ Շեւարդնաձեն: «Ռեգնում» գործակալության համաձայն, նա հայտարարել է, որ «ոչ Ռուսաստանը, ոչ որեւէ այլ պետություն նախազգուշական հարվածների իրավունք չունի»: Ըստ Շեւարդնաձեի, «շուտով Վրաստանը կընդունվի ՆԱՏՕ» եւ դրանից հետո «մեզ հետ ուրիշ լեզվով կխոսեն»: Նա նշել է, որ «դրա համար արդեն շատ բան է արված» եւ, որ «ՆԱՏՕ-ն մեծ շահեր ունի Սեւծովյան տարածաշրջանում»: Միաժամանակ նախագահն ասել է, որ Վրաստանը պատրաստ է ընդառաջ գնալ Ռուսաստանին այն դեպքում, «եթե Ռուսաստանը լինի արդար, օբյեկտիվ եւ տրամադրված համագործակցության» նշելով, որ «համագործակցության օրինակ առաջինը պետք է ցույց տա մեծ պետությունը»:

Մրցույթ՝ կանխորոշված արդյունքով

Հեռուստատեսային եւ ռադիոյի ազգային հանձնաժողովը երեկ հրապարակեց Երեւանի 3-րդ մետրային եւ 63-րդ դեցիմետրային կապուղիների մրցույթների արդյունքները: Հանձնաժողովի որոշմամբ, «ԱՐ»-ը եւ «Արմնյուզը» պահպանեցին նշված կապուղիներով հեռուստահաղորդումներ հեռարձակելու իրավունքը: «Նոյյան տապան» եւ «Ա1+» ընկերությունների մրցութային առաջարկները Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովը համարեց թույլ: Հերթական անգամ:

Մինչ վարկանիշային քվեարկության անցնելը, հանձնաժողովի նախագահ Գրիգոր Ամալյանը հրապարակեց մի փաստաթուղթ, համաձայն որի «Շեն» կոնցեռնի «Մելտեքս» ընկերության մրցութային առաջարկով նախատեսված 200 հազար դոլարի ներդրումը համարվեց չեղյալ, քանի որ ներկայացվել էր կարգի խախտումով՝ ոչ թե գլխավոր տնօրենի, այլ նախագահի տեղակալի ստորագրությամբ: Պրն Ամալյանը վստահեցրեց, որ նշված փաստաթղթի հրապարակումը, կոնկրետ իր քվեարկության վրա, որեւէ կերպ չի ազդել: Սակայն «Ա1+»-ին առանց եթերի թողնելու որոշումը եւս մրցութային առաջարկի ֆինանսական մասին է վերաբերում: Գրիգոր Ամալյանը վստահ է, որ շուրջ 700 հազար դոլարի կտրվածքով «Մելտեքս» ընկերությունը կեղծել է իր ներդրումային առաջարկը, մասնավորապես լիցենզավորված ֆիլմեր ցուցադրելու համար «Մելտեքսի» փաստաթղթում նշված շուրջ 300 հազար դոլարն ավելի պակաս է, քանի որ որոշ ֆիլմերի դեպքում պայմանագրերի ժամկետներն արդեն լրացել են, եւ դրանց իրավունքը ձեռք են բերել այլ ընկերություններ:

Գնահատականների այսքան տարբերություն Գրիգոր Ամալյանի եւ Կարինե Խոդիկյանի միջեւ:

Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի նախագահը վստահեցնում է, որ նույն մանրակրկիտությամբ, ինչ «Ա1+»-ի դեպքում, ուսումնասիրվել է նաեւ «Արմնյուզի» մրցութային առաջարկը, սակայն դրա առավելությունների մասին գերադասեց չխոսել, փոխարենը վստահեցրեց, որ հանձնաժողովի կայացրած որոշումը քաղաքական չէ:

Լրագրողները Գրիգոր Ամալյանին ուղղված բոլոր հարցերով, փաստորեն, մեկ միտք էին արտահայտում՝ Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովը կիրառում է երկակի ստանդարտներ եւ հարց տալիս՝ ավելի անկեղծ չի՞ լինի «Մելտեքս» ընկերությանն ուղղակի չթույլատրել մասնակցելու մրցույթներին, քան ամեն անգամ որեւէ պատճառ գտնել հեռուստաընկերությանը եթեր չտրամադրելու համար, քանի որ «Ա1+»-ի մրցութային առաջարկը թույլ համարելու որոշումն արդեն խրոնիկ բնույթ է կրում եւ, ըստ էության, անձնավորված հակամարտության արդյունք է: Այս մրցույթում եթե «Ար» հեռուստաընկերության առավելությունն ու արժանիքները անառարկելի էին, ապա խիստ կասկածելի էր հանձնաժողովի «անաչառությունը» «Արմնյուզի» պարագայում, առնվազն սեփական արտադրություն մատուցելու տեսակետից: Բացի այդ, որքանով է արդար մեկ սեփականատիրոջ (Բագրատ Սարգսյան) «ձիջել» միանգամից 4 կապուղի («Արմենիա», CNN, TV 5 եւ «Արմնյուզ»), իսկ «Ա1+»-ին զրկել մեկ կապուղուց, հերթական անգամ արհամարհելով հասարակական կարծիքն ու խայտառակելով մեզ օտարների առջեւ:

Հ. Մ.

ՍՆՆԴԱՄԹԵՐՔ

Թունավոր սուրճ եւք խմում եւ հոտած պանիր ուտում

ԵՐԵՎԱՆ, 13 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: ԱՄՆ-ի գյուղատնտեսության ֆինանսավորմամբ Երեւանի պետական համալսարանում բացված միկրոկենսաբանական լաբորատորիան, որտեղ հետազոտվում եւ վերահսկվում են հանրապետության սննդի ձեռնարկություններում վերամշակվող կաթնամթերքի, պանիրների, չրերի եւ գինիների արտադրությունը, սկսել է ուսումնասիրել նաեւ Հայաստան ներկրվող թեյի, սուրճի եւ գինիների որակը:

Ըստ լաբորատորիայի վարիչ, կենսաբանական գիտությունների թեկնածու Կարինե Գրիգորյանի, վերոնշյալ սննդամթերքի, հատկապես Ինդոնեզիայից, Եթովպիայից, Փղոսկրյա Ափից, Վիետնամից, Կամերունից եւ Նիգերիայից ներկրված սուրճի մեջ, մի շարք աղտոտիչներից բացի, գերակշռում է նաեւ տոքսիկոզ սնկերի քանակը: Վերջինները, օրգանական նյութերն ու հյուսվածքները քայքայելուց բացի, արտազատում են նաեւ օխրատոքսին A, որն ունի քաղցկեղածին հատկություն: Տոքսիկոզ սնկերի սահմանային թույլատրելի քանակը, որը նորմավորվում է առաջադեմ երկրներում արտադրվող սուրճի մեջ, Հայաստանում չի իրականացվում՝ համապատասխան սարքավորումներ չունենալու պատճառով: Սննդի այն լաբորատորիաները, որոնք ներկրվող արտադրանքի վրա դնում են որակի կնիքն ու սահմանում պատրաստման ժամկետը, դեռեւս զինված չեն միջազգային չափանիշներին համապատասխան տեխնիկայով:

Բացի դրանից, լաբորատորիայի աշխատակիցների կատարած ստուգայցերի ընթացքում Երեւանի հինգ շուկաներում վաճառվող պանրատեսակներից 60-ի մեջ հայտնաբերվել են կոլի տեսակի աղիքային ցուտիկի մեծ քանակությամբ միկրոօրգանիզմներ: Դա նշանակում է, որ նշված սննդամթերքը պատրաստվում է հակասանիտարական պայմաններում եւ դրա հումքը նախապես համապատասխան ջերմամշակման չի ենթարկվում:

Լաբորատորիան, որը ստուգումների արդյունքներն արդեն ներկայացրել է համապատասխան կազմակերպություններին, առաջիկայում նամակ է հղելու նաեւ ՀՀ առողջապահության նախարարությանը:

Էրեբունի համայնքի դպրոցում օձեր են հայտնվել

Ինչպես տեղեկացանք «Շտապբուժօգնություն» 1-03 օպերատիվ ծառայությունից, երեկ Էրեբունի համայնքի Ավանեսովի 1 փողոցում գտնվող թիվ 160 դպրոցից ժամը 9:20-ի սահմաններում օձի խայթոցից IV մանկական հիվանդանոց է տեղափոխվել 15-ամյա Լիպարիտ Խաչատրյանը: Հիվանդանոցի վերակենդանացման բաժանմունքի բժիշկ Կարինե Ավետյանի հավաստմամբ, հիվանդի վիճակը միջին ծանրության է եղել, գիտակցությունը՝ տեղը, հիվանդանոց ընդունելու պահին վիճակը միտում ուներ ծանրանալու, եթե ժամանակին բուժօգնություն չցուցաբերվեր: Այժմ հիվանդի վիճակը բավարար է:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

ՏԱՍՏԱՌՈՏ

Ընդդիմության աննախադեպ բազմամարդ հանրահավաք Բաքվում

ԲԱՔՈՒ, 13 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ադրբեջանական ընդդիմության ամենահավանական թեկնածու, մուսավաթական Իսա Գամբարին հաջողվել է Բաքվում աննախադեպ բազմամարդ հանրահավաք գումարել: «Թուրան» գործակալությունը հայտնում է, որ նման բողոքի ցույց չէր եղել Հեյդար Ալիեւի ամբողջ պաշտոնավարման ընթացքում: Ըստ հանրահավաքի կազմակերպիչների, մասնակցել է կես միլիոն մարդ, «Թուրանը» նշում է՝ 100 հազար, «Ֆրանսպրեսը»՝ 50 հազար, ոստիկանությունն էլ՝ ընդամենը 8000: Վերջին թիվը «Թուրանը» համարել է ծիծաղելի:

Նոր հարվածներ Իրաքում դաշնակից ուժերի դեմ

Կիրակի օրը «Բաղդադ» հյուրանոցի առջեւ տեղի ունեցած արյունալի պայթյունից հետո (տե՛ս՝ էջ 5) երեկ Տիկրիտ քաղաքում (Սադդամի ծննդավայրը) եւ Բաղդադի մոտ նոր հարձակումներ կատարվեցին ամերիկյան ուժերի դեմ: Երկու գործողություններում էլ օգտագործվեցին դյուրակիր նռնականետեր ամերիկյան զորքի շարասյուների վրա: Սպանվեցին 3 եւ վիրավորվեցին 11 ամերիկացի զինվորներ: Հաջորդական, գրեթե ամենօրյա այս հարձակումները, որոնց հետեւանքով սպանված դաշնակից ուժերի զինվորների թիվը հասել է 207-ի, սկսել են մեծ դժգոհություններ առաջացնել Մ. Նահանգներում: Հատկապես նախընտրական այս տարում այդ հանգամանքը լավագույն օգտագործվում է նախագահ Բուշի մրցակից հավակնորդների կողմից: Ըստ «Գալուպ» հարցախույզի ընկերության տվյալների, Ջորջ Բուշի ժողովրդականությունը վերջին օրերին նահանջել եւ հասել է 42 տոկոսի՝ հուլիսյան 58 տոկոսի դիմաց:

Հորդանանը նույնպես դեմ է թուրքական զորքի Իրաք մտնելուն

Իրաքի ժամանակավոր կառավարությունից, ինչպես նաեւ Իրանից ու Սիրիայից հետո երեկ տարածաշրջանում Վաշինգտոնի դաշնակից Հորդանանի կառավարությունը եւս արտահայտվեց հարեւան երկրներից Իրաք զորք ուղարկելու ծրագրի դեմ: «Դա համազոր կլինի Իրաքի տարբեր մասերի գրավման», ասաց Հորդանանի արտգործնախարարության խոսնակը: Այսուհանդերձ, թուրքական բանակի 10 հազարանոց զորամասը վերջին պատրաստություններն է տեսնում Իրաք մտնելու: Դեռեւս չի հայտարարվում այդ ուժերի տեղակայման վայրը: Իրաքի ժամանակավոր կառավարական խորհրդում արտգործնախարար Հոշիյար Զեբարիի ասելով, ամերիկացիներն իրենց վստահեցրել են, որ թուրքական ուժերը կտեղակայվեն Ֆալուջա եւ Տիկրիտ քաղաքներում, երկրի կենտրոնական մասում, մինչդեռ քրդերի պնդմամբ, նրանք դիրք կգրավեն Սուլեյմանիե քրդաբնակ շրջանում: Թուրքական բանակի գլխավոր հրամանատարը պատասխանել է, որ դիմադրության հանդիպելու դեպքում իրենք անխնա կհարվածեն: Այսպիսով, Իրաքում հակամարտության նոր օջախներ են ստեղծվում, գործադրելով երկրի էթնիկ մասնատումների ծրագիրը:

ՕՐԻՆԱՑ ԵՐԿԻՐ

Ոստիկանների դաժանությունն ու մարդկանց անտարբերությունը

Մեզ արժանի «դուռեր»

ԱՂԱՎՆԻ ՀԱԲՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Մայրաքաղաքը հոկտեմբերի 12-ին տոնեց իր 2785-ամյակը: Հանրապետության հրապարակում այդ օրը տոնակատարություն էր: Հրապարակում հավաքված երիտասարդներն ու ոչ այնքան երիտասարդները լավ տրամադրություն ունեին: Եվ չնայած համերգն ունկնդրողներն ու պարողներն այնքան էլ մեծաթիվ չէին, մեր հանրապետության «փառապանծ» ոստիկանությունը, թվով ավելի, «աչալուրջ» հսկում էր հավաքվածներին:

Համազգեստավոր ոստիկանների մեջ մեկն արտասովոր աչքի էր ընկնում. սեւ վերնազգեստով էր, զգալի ագրեսիվ: Ի վերջո, համերգի ավարտից 30-40 րոպե առաջ ագրեսիվությունը «դուրս թափվեց»: Ոստիկանները եւ «սեւազգեստը» բռնել էին մի տղայի, որը, ըստ «սեւազգեստի», «հարբած էր», եւ, ոչ ավել, ոչ պակաս, Հանրապետության հրապարակի գրեթե կենտրոնում ծեծում էին:

Ոստիկանների անամոթությունն այնտեղ էր հասել, որ երիտասարդին ծեծում էին բոլորի ներկայությամբ, առանց որեւէ անհարմարության զգացումի, կարծես այդպես էլ պիտի լիներ:

Այս միջադեպի առումով արտառոցը, թերեւս, «հայրենի ոստիկանների» պահվածքը չէ: Նման կոպտությունների եւ անբարեկրթության քիչ չենք հանդիպում: Արտառոցը հասարակության պահվածքն էր, որ ամենայն անտարբերությամբ նայում էր եւ ոչ մի կերպ չէր արձագանքում:

Տես էջ 2

ԸՆԹԱՑԻԿ

Դոնփակ նիստերն այնման էլ դոնփակ չեն

Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանում երեկ շարունակվեց «Հոկտեմբերի 27»-ի գործով դռնփակ նիստը: Եվ չնայած վերջին երկու դռնփակ նիստերում հրապարակված գաղտնի նյութերը դատավարության որեւէ մասնակից իրավունք չուներ տարածելու, տեղեկատվություն, այնուամենայնիվ, տրվել է: Մասնավորապես մամուլում եւ «Հայլուր» լրատվական ծրագրով հասարակությանը տեղեկացվել է, թե մինչեւ հոկտեմբերի 27-ը Նաիրի Հունանյանը պատգամավոր Վիկտոր Դալլաքյանին ասել է զենք վերցնելու եւ իշխանության ղեկավարներին սպանելու մտադրության մասին:

Դոնփակ նիստում հրապարակված այլ տեղեկություններ եւս հայտնվել են մամուլում: Թե ով է տեղեկություն տրամադրողը, մնում է հարցական: Թեեւ ինչ վերաբերում է Դալլաքյանին առնչվող դրվագին, ապա, ըստ մեղադրող Գագիկ Ավետիսյանի, այդ տեղեկատվությունն ամենեւին էլ պետական գաղտնիք չէ: Չնայած, ըստ դատախազի, դատարանը պետք է սահմանված կարգով միջոցներ ձեռնարկի:

Դատավոր Սամվել Ուզունյանը նշելով, որ չի հետեւել լրատվությանը, ուստի եւ տեղյակ չէ, թե խոսքն ինչին է վերաբերում, ավելացրեց, որ տեղեկատվության արտահոսքի մեղավորները կպատժվեն:

Այս կապակցությամբ Վազգեն Սարգսյանի իրավահաջորդի շահերի պաշտպան Օլեգ Յունոշեւը նշեց, որ դռնփակ նիստերի ընթացքում հրապարակված նյութերի մի մասը կա իրական գործում: Այսինքն այդ փաստաթղթերից շատերը չեն կարող համարվել պետական գաղտնի նյութեր: Ուստի, Յունոշեւը միջնորդեց դրանք առանձնացնելու հնարավորություն ընձեռել: Միջնորդությունը բավարարվեց:

Անդրադառնալով դռնփակ նիստերի ժամանակ հրապարակված նյութերին եւ Տիգրան Նաղդալյանի սպանության գործով ամբաստանյալ Արմեն Սարգսյանին, Օլեգ Յունոշեւը նշեց, որ դռնփակ նիստում հրապարակված նյութերը բավարար հիմք են Արմեն Սարգսյանի անմեղությունն ապացուցելու համար: Յունոշեւը, սակայն, չմանրամասնեց, թե ինչ նյութերի մասին է խոսքը:

Հայտարարությամբ երեկ դատարանում հանդես եկավ ամբաստանյալ Վոռամ Գալստյանը: Նա նշեց, որ իրեն դեռ գաղտնալսում են, որը նպատակ ունի հոգեբանորեն ճնշել իրեն: Գալստյանը միջնորդեց դատարանին ձեռնարկել միջոցներ գաղտնալսումները դադարեցնելու համար: Միջնորդությունը չքննարկվեց, քանի որ, ըստ Սամվել Ուզունյանի, դատարանը գաղտնալսումները դադարեցնելու իրավունք չունի:

Դատական նիստը կշարունակվի այսօր:

ԱՂԱՎՆԻ ՀԱԲՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ոստիկանների դաժանությունն ու մարդկանց անտարբերությունը

Սկիզբը էջ 1

Մի քանի կանայք փորձեցին միջամտել: Առաջին տպավորությունն այն էր, որ միջամտությունն ազդեց ոստիկանների վրա: Նրանք տղային քաշ տալով հասցրեցին ոստիկանական մեքենայի մոտ, նստեցրին ու հեռացան: Հավանաբար ծեծը ոստիկանատանը շարունակելու համար:

Պատճառաբանությունը, թե երիտասարդը հարբած էր, ամեն դեպքում, արտաքուստ չէր համապատասխանում իրականությանը: Ավելի շուտ, ինքնագոհությամբ «արբած» էին իրենք՝ ոստիկանները: Մանավանդ որ հաստավիզ, կերած-խմած ոստիկանների ֆոնին «վտանգավոր» երիտասարդն այնքան փոքրամարմին էր երեւում:

Ինչեւէ, սա իրողություն է մեր ուժայինների բռնությունների մասին, որոնց նկատմամբ անգամ, այսպես կոչված, տարբերակ երիտասարդությունը բացարձակ անտարբերություն դրսեւորեց: Ցավալի է, որ հղփացած ոստիկանների եւ նրանց նկատմամբ վախի մթնոլորտում անտարբերության ախտով տառապում է ողջ հասարակությունը:

Ավելորդ չեմ համարում ամեն դեպքում հիշեցնել, որ անտարբերությունը վտանգավոր է բոլորիս համար: Այնպես որ, անտարբեր լինելով մենք, նախ եւ առաջ, թույլ ենք տալիս սպանել մեզ, ապա՝ այն ամենը, որ կա մեր շուրջը:

Կվաշավանը (Կոշ) տոնեց իր 1700-ամյակը

Բեղմնավոր ու ոսկեգույն աշունն էր իջխում Արագածոտնի մարզի Կվաշավան (Կոշ) գյուղում, ուր ժամանած հյուրերի հետ տոնական բաղարջը կիսեցին հյուրասեր, շինարար, մշակութային ու պատմական ավանդույթներին հարազատ կոշեցիները:

Գյուղը պատմական է ու հին: Գոյություն է ունեցել դեռեւս մեր թվարկությունից շատ առաջ: Ինչպես հիշատակել են Մովսես Խորենացին, Եղիշեն, Փավստոս Բուզանդը եւ Ղազար Փարպեցին, գյուղը հիմնադրվել է IV դարում: Եվ հիմք ընդունելով դա, գյուղի մարդաբնակության սկիզբը կարելի է ճանաչել 300 թիվը: Ըստ Մովսես Խորենացու Տիրան թագավորը կուրացած վիճակում 332-345 թթ. ապրել է Կուաշում (Կվաշ, Կվաշավան, Կոշ): Որպես հայ Արշակունիների կալվածք, Կոշում են թաղվել Տիրան թագավորը, Հուսիկ կաթողիկոսը եւ Դանիել Արքակյաց քահանան: Գյուղը գտնվելով հարմար աշխարհագրական դիրքում, ամենակարեւոր պատվարներից մեկն էր՝ Դվինը, Արմավիրը, Երեբունին, Վաղարշապատը, Արշաշատը թշնամիներից պաշտպանելու համար: 1604 թ. պարսիկ շահ Աբասի եւ թուրք Սելիմ փաշայի մահակոծան կռվից հետո ավերվել է նաեւ Կոշ գյուղը: Շահի հրամանով բոլորին տեղափոխել են Պարսկաստան: Սակայն 1828 թ. Ռուս-պարսկական պատերազմից հետո, ռուսների հաղթանակից հետո, հայերն օտար ափերից վերադառնում են իրենց օջախները: Արագածոտնի այս հնամյա բնակավայրը եղել է Հայաստանի նշանավոր մշակութային կենտրոններից մեկը, ունեցել է եկեղեցի՝ բազմանդամ ու գործուն միաբանությամբ, դպրոց, ձեռագրական արժեքավոր հավաքածու: Երկրորդ աշխարհամարտին կոշեցիները տվել են 87 զոհ: Նրանց թիվն ավելացավ, երբ կոշեցին անմասն չմնաց ղարաբաղյան ազատագրական պայքարում: Կոշեցիներից 2 տասնյակը մեծ գիտության, առաջադիմական ջահակիրներ են եղել, որոնք մշակույթի, լուսավորության ու գիտության մեջ թողեցին իրենց մնայուն հետքը:

Գյուղի 1700-ամյակի տոնակատարությանն անհամբեր ու մանրակրկիտ պատրաստված կոշեցին ըմբոշխնեց անցած ուրբաթ օրը կայացած թատերականացված բեմականացումը: Տիգրան Մեծի ծիսակառքն իր զորաբանակով մի պտույտ կատարեց մարզահրապարակում եւ ներկաներին հանձնեց իր հրովարտակն ու սուրը, որպես խորհրդանիշ՝ պաշտպանվելու օտար թշնամուց, ու տոնական բաղարջը կիսելու հրաման տվեց... Միջոցառմանը ներկա էին բազմաթիվ հյուրեր: Իսկ ելույթ ունեցողներն՝ Արագածոտնի մարզպետ Գագիկ Գյոնգալյանը, Կոշի գյուղապետ Էդմոն Ադամյանը, մարզպետարանի կրթ. եւ մշակ. վարչության պետ Սիրամարգ Ղուկասյանը, պատ. գիտ. թեկնածու Կարեն Մաթեւոսյանը, Կոշի պատվավոր քաղաքացի Արցախ Բունիաթյանը, Հայաստանի գրողների միության նախագահության անդամ Ավիկ Իսահակյանը եւ այլք շնորհավորանքներ հղեցին կոշեցիներին ու մաղթեցին շարունակել ու պահպանել սերը հայրենիքի, պատմական արմատների հանդեպ ու այդ ամենը փոխանցել սերնդեսերունդ: Միջոցառմանն իր հովանավորությունն ու մասնակցությունն էր բերել Աժ պատգամավոր Խաչիկ Մանուկյանը, որպեսզի այդ պատմական օրը լինի տոնական ու հիշարժան: Նորապսակներին ամուսնական վկայականներ հանձնեց գյուղապետը եւ մաղթեց բեղմնավոր, երջանիկ կյանք: Իսկ օրհնված մատաղը մատուցվեց մարզադաշտում բացված աշնան բարիքներով լի սեղաններին: Բազմաթիվ համույթների ու գեղարվեստական խմբերի ելույթները հաջորդում էին մեկը մյուսին: Մինչեւ ուշ երեկո Կոշում թեւածում էր երգն ու պարը, որն էլ ավարտվեց հրավառությամբ:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

Լոռու մարզում բերքի տոնին մասնակցեցին գրեթե բոլոր համայնքները

Հոկտեմբերի 11-ին, արդեն երրորդ անգամ, Ստեփանավանի տարածաշրջանի Գյուլագարակ համայնքի «Հեքիաթ» հանգստավայրում նշվեց «Բերքի տոնը»: Տոնին մասնակցում էին մարզի գրեթե բոլոր համայնքները: Ըստ տարածաշրջանների՝ հարեւանությամբ տեղաբաշխված յուրաքանչյուր համայնք ներկայացնում էր իր բերքն ու բարիքը՝ գեղարվեստական յուրօրինակ ձեւավորմամբ: Տոնին ցուցանմուշներ էր ներկայացրել նաեւ «Մասիս տաբակ» ընկերությունը, որն իր հումքը ձեռք է բերում Լոռու մարզից:

Ներկաներին ողջունելու եւ շնորհավորելու համար բեմահարթակը տրամադրվեց ՀՀ գյուղատնտեսության փոխնախարար Գալստյանին, Լոռու մարզպետ Հենրիկ Քոչինյանին, Աժ պատգամավոր Վոռամ Գյուլզադյանին, Գուգարաց թեմի առաջնորդ Սեպուհ եպիսկոպոս Չուլջյանին, Լոռու մարզպետարանի գյուղատնտեսության եւ բնապահպանության վարչության պետ Վոլոդյա Բունիաթյանին:

Վ. Բունիաթյանը ներկայացրեց 2003 թ. բերքահավաքի արդյունքները:

Ըստ հայտնած տվյալների՝ արդեն ավարտվել է հացահատիկի բերքահավաքը, արտադրվել է 15 հազ. 938 տ հացահատիկի բերք, 1 հա-ի միջին բերքատվությունը կազմել է 13,5 ց: Մի շարք համայնքներում բերքատվությունն ավելի բարձր է եղել. Այրումում՝ 27,2, Սարամեջում՝ 19, Լեռնանցքում՝ 17, Ճոճկանում՝ 15 ց: Որոշ համայնքներում՝ Մեղրվկա, Նորաշեն, Տաշիր, Վարդաբլուր, Կուրթան աճեցվել է կարտոֆիլի բարձր բերք՝ 1 հա-ի միջին բերքատվությունը կազմել է 180-240 ց, ինչը վարչության պետի հավաստմամբ, առիթ է տալիս հուսալու, որ կլուծվի վերջին տարիներին առաջացած տնկանյութի դեֆիցիտի հարցը: Նա նշեց, որ գրանցվել է բանջարեղենի եւ պտղի բարձր բերք: Արդեն իսկ արտադրվել եւ իրացվել է 4 հազ. 500 տ բանջարեղեն եւ 1500 տ պտուղ: Կարտոֆիլի, պտղի եւ բանջարեղենի բերքահավաքը շարունակվում է: Կուտակված է 84 հազ. տոննա խոտ, 7 հազ. 200 տ ծղոտ, 6 հազ. 500 տ սիլոս: Պրն Բունիաթյանը հայտնեց, որ այս տարի եւս գյուղատնտեսության նախարարությունը խրախուսում է ձեռնարկում բնական աղետներից առավել տուժած համայնքներին եւ սոցիալապես անապահով գյուղացիներին սննդով եւ սերմացուով օժանդակելու ուղղությամբ: Սեպտեմբերին ԼՂՀ-ից ներկրվել է 150 տ աշնանացան ցորենի սերմացու, որն անվարձահատույց բաշխվել է եւ արդեն ցանվել մարզի 23 համայնքներում: Ներքին եւ արտաքին շուկայում մեծ պահանջարկ ունի մարզում արտադրվող կաթնամթերքը, ձուկը, թոչնամիսը մեղրը:

Ավանդույթի համաձայն Լոռու մարզպետը շնորհակալագրեր եւ ավանդական նվերներ հանձնեց բերքատվության բարձր ցուցանիշներ ապահոված համայնքներին:

ՄԻՆՎԵԼ ՄԻԿՈՅԱՆ

Ալավերդին տոնեց քաղաքի կարգավիճակ ստանալու 65-ամյակը

Հոկտեմբերի 12-ին հանդիսավորությամբ նշվեց Ալավերդու՝ քաղաքի կարգավիճակ ստանալու 65-ամյակը: Առավոտյան հազարավոր ալավերդցիներ եւ հյուրեր Սուրբ Գրիգոր Նարեկացի եկեղեցում մասնակցեցին պատարագի: Ապա Հայ առաքելական եկեղեցու Գուգարաց թեմի առաջնորդ Սեպուհ եպիսկոպոս Չուլջյանը կատարեց մատաղօրհնության արարողություն, եւ ներկաներին բաժանվեց մատաղը:

Եկեղեցու հարակից հրապարակում սկսվեց տոնական միջոցառումը: Ալավերդի էին ժամանել Ազգային ժողովի պատգամավորներ, կրթության եւ գիտության նախարարը, Լոռու մարզպետը, մարզի համայնքների ղեկավարներ, հրավիրյալներ, հյուրեր:

«Ալավերդին 65 տարեկան չէ: Ալավերդին հնագույն բնակավայր է, ապաց քաղաքպետ Սարիբեկ Օհանյանը: 1192 թվականին Ալավերդում ստեղծվել է քարե կամուրջը: 233 տարի առաջ այստեղ ստեղծվել է ծուլարանը: Այսօր մենք տոնում ենք 65-ամյակ, որովհետեւ 1938 թ. հոկտեմբերի 1-ին, Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության որոշմամբ, Ալավերդի բանվորական ավանն ստացավ քաղաքի կարգավիճակ»:

ՄԻՆՎԵԼ ՄԻԿՈՅԱՆ

ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ

Ֆադեյ Սարգսյանին շնորհվել է միջազգային ասպետի կոչում

ԵՐԵՎԱՆ,13 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Աշխարհի ասպետների միջազգային միությունը գիտության եւ արվեստի ասպետի կոչում է շնորհել ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի պրեզիդենտ Ֆադեյ Սարգսյանին: Այսօր ԳԱԱ-ում Եվրոպայի բնական գիտությունների եւ հոգեւոր ընդհանրության ակադեմիայի Հայաստանի մասնաճյուղի նախագահ Ռաֆայել Մելիք-Օհանջանյանը եւ Աշխարհի ասպետների միջազգային միության անդամ-պատերազմից հետո: Գ. Տրապեզնիկովի խոսքերով, այս կոչումը տրվում է միջազգային հանրության անունից, եւ միության տարբեր երկրների ներկայացուցիչներն այս տարի միաձայն քվեարկել են միջազգային ասպետի կոչումը հայ գիտնականին շնորհելու օգտին:

Ի դեպ, Հայաստանում միջազգային ասպետի կոչում մինչ օրս շնորհվել էր միայն Նավասարդ եպիսկոպոս Կճոյանին:

ներ, ՌԴ բնական գիտությունների ակադեմիայի նախագահ Գեորգի Տրապեզնիկովը եւ Արարատյան հայրապետական թեմի առաջնորդ Նավասարդ եպիսկոպոս Կճոյանը Ֆ. Սարգսյանին հանձնեցին միջազգային ասպետի դիպլոմն ու թիկնոցը:

Աշխարհի ասպետների միջազգային միությունը, որի կենտրոնը գտնվում է Գերմանիայում, ստեղծվել է Երկրորդ համաշխարհային

Ռ. Մելիք-Օհանջանյանը գիտության եւ արվեստի բնագավառներում ներդրման համար Պետրոս Առաքինի շքանշանով պարգեւատրեց Գ. Տրապեզնիկովին եւ Նավասարդ եպիսկոպոս Կճոյանին:

Եվրոպայի բնական գիտությունների եւ հոգեւոր ընդհանրության ակադեմիայի կողմից գիտության մեջ ներդրման համար պարգեւատրվեցին նաեւ մի շարք գիտնականներ եւ բարերարներ:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության ԺԹ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010, Հանրապետության 47
Ֆաքս՝ 374-1-562863
e-mail: azg2@arminco.com
www.azg.am
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Լրագրողների սենեակ
/ հեռ. 581841
Համակարգ. ծառայութիւն
/ հեռ. 582483
Apple Macintosh
համակարգչային շարուածը
«Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսութեամբ, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան, խստիւ արգելւում են, համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor-in-chief
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

Լրագրողական կազմակերպությունների հայտարարությունը «Զանգվածային լրատվության» օրենքի առիթով

Գիտակցելով «Զանգվածային լրատվության մասին» օրինագծի լայն քննարկման կարեւորությունը, Երեւանի մամուլի ակումբը, Հայաստանի ժուռնալիստների միությունը, Հայաստանի «Ինտերնյուս» հասարակական կազմակերպությունը եւ Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեն միաժամանակ մտահոգություն են հայտնում վերջին օրերին այդ փաստաթղթի շուրջ ստեղծված իրավիճակի առթիվ:

Նախ, մենք մեկ անգամ եւս մեր բավարարվածությունն ենք արտահայտում արդարադատության նախարարության եւ ՀՀ Ազգային ժողովի գիտության, կրթության, մշակույթի եւ երիտասարդության հարցերի հանձնաժողովի ներկայացուցիչներին՝ թափանցիկ աշխատանքի եւ կոծման է ենթարկվել այն բանի համար, թե, իբր, նախատեսում է քրեական պատասխանատվություն զրպարտության եւ վիրավորանքի համար, ինչպես նաեւ՝ հասարակ քաղաքացիների համեմատ պաշտոնյաների առավել մեծ իրավական պաշտպանվածություն ԶԼՄ-ներից: Նման օրենսդրական դրույթների դեմ լրագրողական հանրությունն իսկապես պետք է վճռականորեն պայքարի, սակայն այդ պայքարը պետք է հասցեագրված լինի: Այսինքն՝ քննադատությունը պետք է ուղղվի ոչ թե «Զանգվածային լրատվության մասին» օրինագծին, որը չի պարունակում (եւ չի կարող պարունակել) քրեական պատասխանատվություն նախատեսող դրույթներ, այլ՝ ՀՀ գործող քրեական օրենսգրքին:

«Զանգվածային լրատվության մասին» օրինագծի ողջ պատմությունը լրագրողների, փորձագետների, միջազգային կազմակերպությունների, գործադիր եւ օրենսդիր իշխանությունների ներկայացուցիչների միջեւ այնպիսի արդյունավետ բանավեճերի եւ համագործակցության խոստումնալից օրինակ է, որոնց շնորհիվ իր էությամբ հետադիմական օրինագիծը մեկուկես տարում բերվեց Եվրոպայի խորհրդի չափանիշներին մոտ տեսքի: Մնացել է մեկ քայլ, եւ որպեսզի այն սխալ չլինի, մենք կոչ ենք անում՝

– մեր լրագրող գործընկերներին՝ կողմնորոշվել օրենք ունենալ-չունենալու հարցում, եւ եթե մեծամասնությունն, այսուհանդերձ, կողմ լինի ունենալուն, ապա առաջարկություններով եւ դիտողություններով նպաստել «Զանգվածային լրատվության մասին» օրինագծի կատարելագործմանը.

– կառավարության եւ Ազգային ժողովի ներկայացուցիչներին՝ հիշել, որ Եվրոպայի խորհուրդը սպասում է ոչ թե ԶԼՄ նոր օրենք ընդունելու պարտավորության մեխանիկական կատարում, այլ լրագրողական հանրության հետ այդ հարցում համաձայնության ձեռքբերում.

– օրինագծի շուրջ բանավեճերի բոլոր մասնակիցներին՝ հրաժարվել ամբիցիաներից եւ այսպիսիսկ դատողություններից, առաջնորդվել բացառապես խոսքի եւ մամուլի ազատության շահերով.

– զանգվածային լրատվության միջոցների ղեկավարներին՝ նպաստել թերթերի էջերում եւ եթերում օրինագծի կառուցողական քննարկումներին.

– կուսակցական գործիչներին՝ հրաժարվել ԶԼՄ-ների մասին օրենսդրությանը պատեհապաշտական մոտեցում ցուցաբերելուց: Հիշել, որ տեղեկատվական ոլորտը կարգավորող օրենքների որակից են մեծապես կախված քաղաքական կյանքի առողջացումն ու երկրում ժողովրդավարության զարգացումը:

(կրճատումներով)

(*) Խմբագրության կողմից ավելացնենք, որ այդ նախագիծը, հավանաբար գրված լինելով խիստ հապճեպ, միանգամայն անգրագետ է պատրաստված:

Պակաս անհեթեթ չեն «ԶԼ» օրենքի ընդունումը ղարաբաղյան կարգավորման գործընթացների մանրամասները հասարակությունից թաքցնելու կառավարության ցանկությանը կամ լրագրողներին ծեծելուն կոչելու փորձերը: Ցավոք, ոչ իրազեկ դատողությունները նման օրինակներով չեն սահմանափակվում: Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված օրինագիծն, իրոք, դեռեւս շատ թերություններ ունի, սակայն ներկայացվող չհիմնավորված առարկությունները միայն շեղում են դրա կատարելագործմանն ուղղված կառուցողական աշխատանքի անհրաժեշտությունից:

Վերջին պահին Մամուլի ազգային ակումբի այլընտրանքային նախագծի հայտնվելը նույնպես հիշ է նպաստում օրինաստեղծ գործընթացին լրագրողական հանրության արդյունավետ մասնակցությանը: Նախ՝ այն չափազանց ուշացած է ու խորհրդարան է ներկայացվել առանց լրագրողների լայն շրջանակների հետ նախնական քննարկման եւ համաձայնեցման: Երկրորդ՝ իր որակով զիջում է պաշտոնական օրինագծին եւ հազիվ թե կարող է առավել ազատական համարվել: Վերջապես երրորդ՝ ՄԱԱ-ի նախագիծը բոլոր նրանց, ովքեր հակված են անտեսելու լրագրողական միավորումների առաջարկները, հիմք է տալիս մասնագիտական միջավայրում առկա հակասությունները:

Հայաստանի Հանրապետության ազգային ակումբի այլընտրանքային նախագիծ հայտնվելը նույնպես հիշ է նպաստում օրինաստեղծ գործընթացին լրագրողական հանրության արդյունավետ մասնակցությանը: Նախ՝ այն չափազանց ուշացած է ու խորհրդարան է ներկայացվել առանց լրագրողների լայն շրջանակների հետ նախնական քննարկման եւ համաձայնեցման: Երկրորդ՝ իր որակով զիջում է պաշտոնական օրինագծին եւ հազիվ թե կարող է առավել ազատական համարվել: Վերջապես երրորդ՝ ՄԱԱ-ի նախագիծը բոլոր նրանց, ովքեր հակված են անտեսելու լրագրողական միավորումների առաջարկները, հիմք է տալիս մասնագիտական միջավայրում առկա հակասությունները:

Իսպանիայի դեսպանը համալսարանում

Հայաստանում Իսպանիայի դեսպան Խոսե Մարիա Ռոբլես Ֆրագան (նստավայրը՝ Մոսկվա) Հայաստան կատարած այցի շրջանակներում հոկտեմբերի 11-ին հյուրընկալվեց Երեւանի պետական համալսարանում: Ե. Չարենցի անվան դահլիճում դեսպանը հանդիպեց ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի իսպաներենի բաժնի ուսանողների հետ: Իսպանիայի դեսպանին ողջունեցին ԵՊՀ միջազգային կապերի գծով պրոռեկտոր Ա. Ավետիսյանը, ռոմանական բանասիրության ամբիոնի վարիչ Վ. Սարգսյանը: Նրանք շնորհավորեցին դեսպանին Իսպանիայի ազգային տոնի առթիվ, նաեւ շնորհակալություն հայտնեցին հարգարժան հյուրին, որ նա, Հայաստանում առաջին անգամ լինելով, ցանկություն էր հայտնել հանդիպելու հայ ուսանողների հետ:

Ներկաներին ուղղված ողջույնի ելույթում Իսպանիայի դեսպանը նշեց, որ, որպես հին ժողովուրդներ, հայերը եւ իսպանացիները շատ ընդհանրություններ ունեն: Նա նաեւ հույս հայտնեց, որ երկու երկրների համագործակցությունն էլ ավելի կսերտանա համալսարանական կապերի զարգացման շնորհիվ: Ապա դեսպանը համալսարանականներին հանձնեց Սերվանտեսի «Դոն Կիխոտի» երկհատորյակը եւ մասնագիտական ու գեղարվեստական մի շարք այլ գրքեր:

Հանդիպման վերջում Խոսե Մարիա Ռոբլես Ֆրագան պատասխանեց ուսանողների հարցերին:

ԵՊՀ լրատվական ծառայություն

Բելառուս գործարարներ Երեւանում

Բելառուսի եւ Հայաստանի առեւտրաարդյունաբերական պալատների համագործակցությունն սկսվել է 2002 թ. հոկտեմբերին, երբ Հայաստանի ԱԱՊ-ի ներկայացուցիչներն այցելել էին Մինսկ: Երեկ արդեն Բելառուսի գործարարներն էին ժամանել Երեւան՝ մասնակցելու հայ-բելառուսական գործարար հանդիպմանը:

Հանդիպման ժամանակ ելույթներ ունեցան Բելառուսի ԱԱՊ նախագահ Վլադիմիր Բորովը, Հայաստանի ԱԱՊ նախագահ Մարտին Սարգսյանը: Հայաստանի ԱԱՊ փոխնախագահ Արամ Վարդանյանն էլ ներկաներին հիշեցրեց, որ երկու երկրների սերտ համագործակցությունը դեռեւս խորհրդային տարիներից է: Հայաստանը Բելառուսից ստանում էր տրակտորներ եւ հեռուստացույցներ: Ներկայումս ներկրվում են սառնարաններ, դեղորայք, լուցկի, տրիկոտաժ եւ այլն: Հայաստանից Բելառուս արտահանվում են հյութեր, կոնյակ, գինի, ծխախոտ, էլեկտրական սարքավորումներ եւ լարեր, ոսկերչական իրեր: Այդուհանդերձ, երկու երկրների առեւտրաշրջանառության ծավալները շարունակում են փոքր մնալ: Հայաստանի արտահանումը առեւտրի միայն 0,4 տոկոսն է բաժին ընկնում Բելառուսի հետ առեւտրաշրջանառությանը:

Հայկական կողմից գործարար հանդիպմանը մասնակցում էին Երեւանի գարեջրի գործարանի, «Էքսպերտիզա» ընկերության եւ մի շարք այլ ձեռնարկությունների ղեկավարներ: Բելառուսը ներկայացնում էին Մինսկի տրակտորների, Կոբրինսկի «Ռուչայկա» մանվածային, Մինսկի ավտոմոբիլային, Բարանովիչի «Ատլանտ» հատուկ շինարարական գործարանների պատասխանատուները:

Ս. Մ.

Կանխվել է մախանենգ ադրանքների ներկրումը Քարիզից Երեւան

ՀՀ ազգային անվտանգության մարմինների օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում կանխվել է մախանենգ ճանապարհով մեծ քանակությամբ ադրանքների ներկրումը հանրապետություն: Քարիզ-Երեւան չվերթով ժամանած Երեւան քաղաքի բնակչուհի Արմենուհի Գալստյանը հանցավոր համաձայնության գալով «Զվարթնոց» մախսատան տեսուչ Արթուր Արզումանյանի հետ, փորձել է անօրինական կարգով հանրապետություն ներկրել շուրջ 7 մլն դրամ արժողությամբ լայն սպառման ադրանքներ (պարֆյումերիա, հագուստեղեն, բջջային հեռախոսներ, հեռուստացույց եւ այլն): Մախսանենգության փաստի առթիվ հարուցվել է քրեական գործ: Նախաքննությունը կատարում է ՀՀ ԱԱԾ քննչական վարչությունը:

ՀՀ ԱԱԾ մամուլի կենտրոն

Տարածաշրջանային զարգացումները ի՞նչ են լուսաբանվում մեր մամուլում

Երեւանի մամուլի ազգային ակումբը Ֆրիդրիխ Էբերտի անվան հիմնադրամի հետ հոկտեմբերի 10-12-ը Ծաղկաձորում անցկացրեցին սեմինար «2003 թվականի ընտրությունները հարավկովկասյան երկրներում եւ դրանց ազդեցությունը տարածաշրջանի գործընթացների վրա» թեմայով: Լսեցին զեկուցումներ եվրոպական կառույցներին ինտեգրման եւ ժողովրդավարության զարգացման գործընթացի վրա ընտրությունների ազդեցության, Ադրբեջանի նախագահական եւ Վրաստանի խորհրդարանական ընտրությունների առանձնահատկությունների, հայաստանյան մամուլում դրանց արձագանքների, ինչպես նաեւ հարեւան երկրներում մեր երկրի ընտրությունների հնարավոր հետեւանքների եւ առհասարակ զանգվածային լրատվամիջոցների գործունեության վրա ընտրությունների ազդեցության մասին:

«Եվրոպական ինտեգրացիա» հասարակական կազմակերպության նախագահ Կարեն Բեֆարյանի հանգամանալից զեկուցման մեջ առավելապես անդրադարձ եղավ, թե մեր երկրում անցած ընտրությունների արձագանքները որչափ ազդեցին եվրոպական կառույցներին ինտեգրման գործընթացի վրա: Ներառելով բոլոր գործոնները, նա հանգեց այն եզրակացության, որ Հայաստանում ժողովրդավարության զարգացման թռիչք տեղի չունեցավ, հետեւաբար նույնը կանխատեսելի է նաեւ Ադրբեջանում ու Վրաստանում: Գլխավոր թերություններից նա առանձնացրեց ընդդիմության վստահված անձերի թույլ դերակատարումը:

Ադրբեջանում անցկացվելիք նախագահական ընտրությունների մասին խոսեց ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի նախագահի խորհրդական Խաչատուր Բեգիրջանը: Նրա դիտարկմամբ, նախագահի թեկնածուներից շատերին չգրանցելու իրողությունը պատճառ դարձավ միջազգային կառույցների դժգոհության արտահայտմանը: Պատկերն ավելի ծանր է քարոզարշավի ժամանակ, երբ ընդդիմության թեկնածուներին ժողովուրդը դիմավորում է լոլիկների ու ձվերի հարվածներով, հաճախ էլ՝ ոստիկանները ժողովրդին ուղղակի արգելում են մասնակցել հանդիպումներին: Դիտորդական խմբում ընդգրկված են ԱՊՀ 55 դիտորդներ՝ Յուրի Յարովի գլխավորությամբ, առանց հայաստանյան դիտորդի: Սոցիոլոգիական վերջին հարցման ժամանակ Իլհամ Ալիեւը ստացել է ձայների 58 տոկոսը, Իսա Գամբարը՝ 27 տոկոսը, իսկ մյուս 6 թեկնածուներին ձայների չնչին տոկոս է հասել:

Հեռատեսիկ լրագրողների ընկերակցության «Ռեգիոն» կենտրոնի տնօրեն Լաուրա Բաղդասարյանը Վրաստանի ընտրությունները ներկայացրեց որպես երկրի ներքին կյանքի հայելի՝ մատնանշելով էդուարդ Շեւարդնաձեի ժամանակաշրջանի ավարտը եւ դրա էական նշանակությունը երկրի արտաքին եւ ներքին հարաբերությունների զարգացումների վրա: Մյուս կարեւոր հանգամանքը կուսակցություններից պահանջվող ձայների ավելի բարձր՝ 7 տոկոսի հաղթահարումն է, որը մուտք գործեց նախորդ ընտրությունների ժամանակ: Խորհրդարանական ընտրություններն, ըստ էության, որոշիչ դեր կխաղան հետագա նախագահական ընտրությունների համար, քանի որ արդեն իսկ որոշակիորեն պարզ կլինի, թե կուսակցական որ թեւը կվերցնի իշխանությունը: Տկն Բաղդասարյանը նշեց, որ ամենայն հավանականությամբ Վրաստանի խորհրդարանում էլ գերիշխող դիրք կգրավեն օլիգարխները:

«Մեր մամուլում հարեւան երկրների ընտրությունների վերաբերյալ գրվում են ոչ թե վերլուծական հոդվածներ, այլ՝ ընդամենը հակիրճ լրատվություններ», իր զեկուցման մեջ ասաց «Գոլոս Արմենիի» թերթի մեկնաբան Արիս Ղազինյանը: Ուսումնասիրելով վերջին մեկ ամսվա հրապարակումները, նա նկատել է, որ ամենից շատ «Իրավունք» թերթն է անդրադարձել տարածաշրջանային զարգացումներին: Իսկ Թբիլիսիից «Ազգ» թերթի թղթակից Թաթուլ Հակոբյանի նյութերը՝ չեն լուսաբանում երկրի ներքաղաքական կյանքի վրա ընտրությունների համակողմանի ազդեցությունը:

Քաղաքական եւ միջազգային հետազոտությունների կենտրոնի տնօրեն Աղասի Ենոքյանի զեկուցումը, որ վերնագրված էր «Ընտրությունները Հայաստանում եւ դրանց հնարավոր հետեւանքները հարեւան երկրների հետ հարաբերությունների համար», չգոհացրեց ներկաներից շատերին այն պատճառաբանությամբ, որ խորքային չէր եւ ընդգրկում էր ոչ հավաստի տեղեկատվություն: Նշենք նրա արտահայտած կարծիքներից միայն մեկը, թե Հայաստանը միտումնավոր է ձգձգում ղարաբաղյան հիմնահարցի լուծումը՝ մեկնաբանությունները թողնելով ընթերցողին:

«Մամուլի ազգային ակումբի» նախագահ Բորիս Նավասարդյանը սեմինարի վերջում հանդես եկավ զեկուցումով, որում ամփոփիչ ներկայացրեց ընտրությունների ազդեցությունը լրատվամիջոցների վրա: Նրա տեսակետով, ընտրություններն ամենից առաջ ժողովրդավարության զարգացման հնարավորություն են տալիս, որն էլ մամուլի ազատության կարեւորագույն նախադայմանն է, ինչպես նաեւ լավագույն պայմաններ են ստեղծում լրատվամիջոցների ֆինանսական վիճակի բարելավման եւ լրագրողների հմտահաստատման համար: Օրինակ բերելով ռուսական, վրացական եւ ադրբեջանական մոդելները, նա փաստեց, որ հայկական մոդելում ընտրությունները դառնում են խոսքի ազատության սահմանափակման միջոց, քանի որ լրատվամիջոցները չեն ամրագրում այդ ընթացքում ընձեռված ազատությունը: Լրագրողական համերաշխությամբ եւս զիջում ենք հարեւան երկրներին, որտեղ գործում են առավել միասնական եւ նպատակաուղղված: Նյութական բարելավման առումով ավելի ծանր է մեր տղաքիր մամուլի վիճակը, քանի որ որոշ հեռուստաընկերություններ արդեն ձեռք են բերել սեփական տարածքներ: Պրն Նավասարդյանը դժգոհություն հայտնեց մամուլի օրենսդրական փոփոխություններից, սակայն սեմինարը եզրափակեց ոչ հուսահատական, այլ լավատեսական տրամադրությամբ:

ՀՈՒՇԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Ստահոգություններ

Հատուկ պահպանվող տարածքների մասին գործող օրենսդրությունը ժամանակավրեպ է դարձել

Հայաստանի հատուկ պահպանվող տարածքների ընդհանուր մակերեսը կազմում է 311 հազար հա, որը հանրապետության տարածքի մոտ 10 տոկոսն է, իսկ առանց Սևանա լճի՝ մոտ 6 տոկոսը: Մինչեւ 2002 թ. կեսերը արգելոցներն ու ազգային պարկերը բացառապես պետբյուջեից սնվող կազմակերպություններ էին: 2002 թ. կեսերից, պետությունը, ազատվելով գլխից էլ, գլխացավից էլ, դրանց պահպանությունն իրականացնող կառույցներին ընդարձակ պետական ոչ առեւտրային կազմակերպության կարգավիճակ, այսինքն սրանք տնտեսական գործունեություն ծավալելու հավին սեփական ֆինանսական միջոցները պիտի հայթայթեն ու գլուխները պահեն: Ինքը դոտացիաներ խոստացավ միայն անհրաժեշտության դեպքում: Այդ հնարավորությունը սակայն, առայժմ որեւէ կերպ չի օգտագործվում: Աշխարհի շատ երկրներում այս տարածքները տուրիզմի զարգացման կարեւոր աղբյուր են, իսկ մեզանում էկոտուրիզմի մասին առայժմ միայն խոսվում է: Այստեղ կարելի է նաեւ գիտաճանաչողական էքսկուրսիաներ կազմակերպել, բուհերի հետ պայմանագրային հարաբերությունների մեջ մտնելով ուսանողական պրակտիկաներ: Մի խոսքով, ուղիները շատ են: Նոր կարգավիճակով կազմակերպությունների աշխատողները եւս այդ փոփոխությունից որեւէ էական արդյունք չեն արձանագրել իրենց համար: Ամիսներ աշխատավարձ չստանալով, իրենց ընտանիքի հոգսերը սիրված են լինում հոգալ հատուկ պահպանվող տարածքների բարիքների հավին արժեքավոր բնափայտն իբրեւ շինանյութ օգտագործելով, կենցաղում կիրառելի, վաճառքի կամ սննդի համար պիտանի վայրի բուսատեսակներն անխնա կողոպտելով բնությունից: Եվ ոչ միայն իրենք, այլեւ հարակից տարածքների բնակչությունը, հավի չնստելով այն իրողության հետ, որ բնության վերարտադրության հնարավորություններն անսպառ չեն: Վայրենի, տարերային շահագործումից, առանց նույնիսկ գիտական հետազոտությունների անհրաժեշտության, արդեն ակնհայտ են ֆանտաստիկ կորուստները անտառային տարածքների աստիճանական նվազումը, սիգ ծկան պաշարների աղետալի կրճատումը:

Հայտնի չէ, որակական կորուստներ, այսինքն որեւէ տեսակի ընդհանրապես անհետացում, եղե՞լ են, թե ոչ: Գույքագրում պիտի իրականացվի, որպեսզի պարզվի ճշմարտությունը: Համենայն դեպս, ինչպես հուսադրում է կենսաբանական գիտությունների դոկտոր, բնապահպանության նախարարության Բնական պաշարների կառավարման ծրագրի կենսաբազմազանության պահպանության բաղադրիչի համակարգող Սամվել Բալոյանը, բնության զարգացման օրինաչափությունները նկատի առնելով, 15 տարին խիստ փոքր ժամանակաշրջան է որակական կորուստների համար: Այսինքն դեռ ուշ չէ, եւ ամեն ինչ կորած չէ: Սակայն չմոռանանք, որ բնության նույն օրենքներով քանակական ահռելի կորուստները կարող են արագ մոտեցնել որակականին հանգելու ժամանակը:

Հատուկ պահպանվող տարածքների գործունեությունը կարգավորող օրենքն ընդունվել է 1991 թ. դեկտեմբերին, եւ դրանից հետո որեւէ փոփոխության կամ լրացումների չի ենթարկվել, թեեւ արմատապես փոխվել են իրենց հետ այս կամ այն կերպ առնչվող բոլոր կառույցների կարգավիճակն ու գործողության սկզբունքները: Վարչատարածքային նոր բաժանումների արդյունքում շրջանները փոխարինվել են մարզերով, ստեղծվել ու կայացման փուլում են տեղական ինքնակառավարման մարմինները: Այսօր վերանայումների խիստ կարիք ունեն հատկապես արգելոցների սահմանները: Հաճախ դրանք ծուլվում են շրջակա բնակավայրերի հետ, ոչնչով չեն առանձնանում դրանցից: Այս տարածքներում գյուղացիները անասուններին արոտի են բերում եւ արածեցնում հաճախ անթույլատրելի սահմաններում: Այսօր հատուկ տարածքները կառավարվում են ոչ պետական առեւտրային կազմակերպությունների համար սահմանված կանոնադրություններով: Պահպանության պատասխանատվությունն ընկնում է միայն սուղ հնարավորություններով այս կառույցների վրա, թեեւ եւ պետական, եւ մասնավոր այլ մարմինների կողմից եւս այդ տարածքները ենթարկվում են տարբեր կարգի շահագործման: Այս բացը հաճախ նույնիսկ ընդհարումների առաջացման պատճառ է դառնում:

Շատ կարեւոր է, որ նոր օրենսդրության մեջ, որի մշակումն ու հաստատումը վաղուց օրընթաց խնդիր է, առաջինը հստակեցվեն կառավարման ոլորտները: Այժմ պահպանման ենթակա տարածքների վերաբերյալ եթե նույնիսկ որեւէ նախագիծ, հայեցակարգ կամ ռազմավարություն մշակվում էլ է, ապա անպայման իրարամերժ մեկնաբանությունների է արժանանում: Չկա դրանց քաղաքականության իրականացման երաշխավորը՝ նոր ժամանակների պահանջներին համապատասխանող օրենքը: Գործող օրենսդրությունը վաղուց ժամանակավրեպ է դարձել:

Ամեն մի կորուստ ողջ մարդկության համար է

Հատուկ տարածքների փրկության ինչպիսի՞ ուղիներ են տեսնում այս ասպարեզի ճանաչված մասնագետները: Կենսաբանական գիտությունների դոկտոր Նազիկ Խանջյանի կարծիքով, պետք է գնալ փոքր արգելոցներ ստեղծելու ճանապարհով: «Ի սկզբանե, երբ արգելոցները հիմնադրվեցին, շատ մեծ տարածքներ վերցվեցին դրանց համար: Մեր հանրապետությունը խիստ փոքր է նման շռայլության համար: Փոքր արգելոցներում հնարավոր կլինի պատշաճ կազմակերպել եւ գիտական, եւ պահպանության խնդիրները», ասում է նա: Այդպիսի կարգավիճակը փրկություն կդառնա, օրինակ, որդան կարմիր միջատի համար, որից աստիճանաբար զրկվում է Արարատյան դաշտավայրը: Գիտնականի համոզմամբ, որդան կարմիրի արգելավայրը պետք է վերածել փոքր արգելոցի: Այդ դեպքում միայն հնարավոր է ապահովել միջատների համար կերաբույս հանդիսացող որդանախոտի ու եղեգնի նորմալ աճն ու բազմացումը: Գոնե մինչեւ այն պահը, որ սփյուռքի կամ հայաստանցի հարուստ գործարարներից որեւէ մեկը կխիզախի ներդրումներ անել ու աշխարհահռչակ բնական ներկանյութի արդյունագործական արտադրություն կազմակերպել:

Հայաստանի կանաչների միության նախագահն էլ գտնում է, որ եթե նույնիսկ ոչինչ չարվի, հատուկ տարածքները հնարավոր է պատշաճ պահպանել միայն դրանց կանոնադրական պահանջները կատարելու միջոցով: Պարզապես դրա իրականացման ցանկություն պիտի արտահայտեն բոլոր իշխանավորները, ողջ կառավարությունը:

Կենսաբանական գիտությունների դոկտոր Սամվել Բալոյանը մատնանշում է ոչ պակաս կարեւոր մի հանգամանք եւս. հատուկ պահպանվող տարածքների կայացման գործում պետք է ակտիվորեն ներգրավել շրջակայքի բնակչությանը, որպեսզի նա սեփական փորձով համոզվի, որ արգելոցի կամ ազգային պարկի պահպանությունը բխում է նախ իր շահերից: Նրանց իբրեւ աշխատուժի պետք է ներգրավել կառավարման գործընթացներում, օրենսդրորեն սահմանել արտոնությունների համակարգ հենց նրանց համար, այսինքն՝ շահագրգռվածության մեխանիզմներ կիրառել:

Այս տարածքների էկոլոգիական անվտանգությունը սպառնալիքի տակ է նաեւ բնակչության անիրազեկության պատճառով: Ինֆորմացիոն վակուումի մեծ պատնեշը բաժանում է նրանց իրարից, ուղղակի բացառում հասարակության համապատասխան վերաբերմունքի ձեւավորումը:

Եվ, իհարկե, պետությունը պիտի հայացքով շրջվի դեպի հատուկ պահպանվող տարածքները, չզրկի դրանց իր հովանավորությունից, որպեսզի հատուկ տարածքների պահպանությունը չմնա լոկ գրոցներում փոշոտվող կանոնադրությունների հիմնախնդիր: Կենսաբազմազանության աղքատացումը ամեն ինչից զատ Հայաստանի համար պատմա-մշակութային արժեք ունի նաեւ մոլորակի կտրվածքով: Որ բնության արարչագործության այս կամ այն եզակի նմուշը ծնվել ու շարունակում է ապրել հենց այստեղ, եւ որեւէ տեսակի ոչնչացումը անդառնալի կորուստ է լինելու ողջ մարդկության համար:

ԳԱԲԻՆԵ ԴԱՆԻԵԼՅԱՆ
Կովկասյան «Ռեգիոն» հետազոտական կենտրոն

Դատարանի պորտինի վճռի դիմաց քաղաքացին հատուցում է իր անձնական գույքով

Երեւանի բնակիչ Սոնյա Հարությունյանը դատարանի պորտինի վճռի հետեւանքով կորցրել է սեփական բնակարանն ու գույքը եւ արդեն 6 տարի նույն դատարանի միջոցով նրան չի հաջողվում վերադարձնել կորցրածը:

1997 թ.-ին Երեւանի բնակիչներ Ռիմա Մուրադյանն ու Գոհար Պետրոսյանը հայցադիմում են ներկայացրել Արաբկիրի ժողդատարան՝ «Ռելե-7» բնակիչ կոոպերատիվից պահանջելով վերադարձնել կոոպերատիվ շենքում բնակարանների փայատերեր դառնալու համար «Հայկաշ» բանկին փոխանցված գումարը: 1993 թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին հայցվորները համապատասխանաբար վճարել են 2 մլն 296 հազար եւ 2 մլն 352 հազար խորհրդային ռուբլի, ինչպես նաեւ 175-հազարական ռուբլի մուտքի վճար՝ «Ռելե-7» բնակիչ կոոպերատիվին:

Կոոպերատիվի նախագահն էր Ս. Հարությունյանի ամուսինը՝ Ալբերտ Ստեփանյանը, որը հայցի քննության ժամանակ հանրապետությունում չի եղել: Հարկ է նշել, որ գործով կայացված առաջին վճռով՝ 1997 թ. հունիսի 3-ին, Երեւանի Արաբկիրի շրջանի դատարանը գտել էր, որ կոոպերատիվի ղեկավարությունը որեւէ մեղք չունի շենքի շինարարությունը չսկսելու պատճառով հայցվորներին վնաս պատճառելու հարցում: Կոոպերատիվը ձեռնարկել է շինարարական աշխատանքները՝ պատվիրել է նախագիծ, տեխնիկական պայմաններին համապատասխան փաստաթղթեր, բանկում բացել հաշիվ, փայատերերից հավաքված գումարները փոխանցել այդ հաշվին: Դատարանը գտել է նաեւ, որ շինարարական աշխատանքները չեն սկսվել հատկացված տարածքն ազատ չլինելու պատճառով: Այդ հարցը պետք է լուծեր Երեւանքոռհրդի ղեկավարությունը, որին կոոպերատիվի ղեկավարությունը բազմիցս դիմել է գրավոր եւ բանավոր:

«Համաձայն դրամական ռեֆորմի, կոոպերատիվի հաշվին մուտք եղած գումարները փոքրացել են 200 անգամ, որի մեջ որեւէ մեղք չունի կոոպերատիվը», ասվում է վճռում: Նշվում է նաեւ, որ հայցվորներին հայտնի են եղել ռեֆորմի հետեւանքները, ինչպես նաեւ այն, որ 1994 թ. շենքի շինարարությունը չի սկսվելու, նրանք կարող էին հետ ստանալ իրենց գումարները դրամական ռեֆորմին համապատասխան: Վճռով հայցվոր Ռ. Մուրադյանի վճարը հաշվարկվել է 12.480 դրամ, իսկ Պետրոսյանինը՝ 10.871 դրամ, որը նրանք կարող էին ստանալ «Հայկաշ» բանկից: Չհամակերպվելով դրամական ռեֆորմի արդյունքների հետ, հայցվորները բողոքարկել են դատարանի վճիռը:

ՀՀ Գերագույն դատարանի քաղաքացիական գործերի դատական կոլեգիան 1997 թ. հուլիսի 17-ին բեկանել է հիշյալ վճիռը հիմնավորելով, որ «դատարանը չի պարզաբանել, թե հայցվորները երբ են գումարը վերադարձնելու պահանջ ներկայացրել, ինչ հաշվարկով պետք է փոխհատուցվի նրանց նախկինում վճարած գումարը, ինչ կարգավիճակով է գումարը պահվել «Հայկաշ» բանկում, աճե՞լ է արդյոք դրա ծավալը, պե՞տք է նախատեսվի որեւէ հավելավճար բանկում գտնվող գումարի նկատմամբ, թե՞ փոխհատուցումը կատարվի միայն դատարանի կողմից իրականացված ռուբլի-դրամ հաշվարկով, ունի՞ արդյոք մեղքի որեւէ բաժին «Ռելե» գործարանը»: Սակայն նույն Արաբկիրի ժողդատարանը ոչ միայն չի վերացրել վերադաս դատական ատյանի մատնանշած դատավարական խախտումները, այլեւ հավելել է նոր խախտումներով:

Դատարանն առանց պատասխանող կողմի ներգրավելով գործը (վճռում նշել է, որ պատասխանողը հանրապետությունում չէ), 1998 թ. հունիսի 19-ին վճռել է Ալբերտ Ստեփանյանի տնտեսությունից հօգուտ հայցվորների բռնագանձել մոտ 11 մլն դրամ: Ընդ որում, պահանջվող գումարը դատարանի հաշվարկով աճել է մոտ 500 անգամ, սակայն չի պարզաբանել, թե որ պահից է կատարել գումարի սղաճի հաշվարկը: Ահա այս պայմաններում դատարանը վճռել է գանձել «Ռելե-7» բնակիչ կոոպերատիվի նախագահ Ալբերտ Ստեփանյանից հօգուտ Ռ. Մուրադյանի՝ 5 մլն 832 հազար 670 դրամ, իսկ Գ. Պետրոսյանի օգտին՝ 5 մլն 134 հազար 564 դրամ, նաեւ՝ 219,844 դրամ հօգուտ պետբյուջեի: Հիշյալ դատական ակտը բողոքարկվել է մի քանի անգամ, եւ իրավաբաններն ընդգծել են այն հանգամանքը, որ հայցվորները հետագայում գրավոր դիմում չեն ներկայացրել կոոպերատիվից դուրս գալու մասին, դատարանը չի պարզաբանել, թե երկրում կատարվող դրամական ռեֆորմի պայմաններում, երբ կաթվածահար էր ողջ բանկային համակարգը, ռուբլու արժեզրկման համար պատասխանատո՞ւ էր կոոպերատիվի նախագահը եւ ի՞նչ տրամաբանությամբ է դատարանը բռնագանձումը տարածել կոոպերատիվի նախագահի անձնական գույքի վրա:

Քանի որ Ալբերտ Ստեփանյանը տեղյակ չի եղել հիշյալ դատաքննության մասին, վճիռը չի բողոքարկվել ու Ավան եւ Նոր-Նորք համայնքների առաջին ատյանի դատարանի 2000 թ. նոյեմբերի 10-ի վճռով բռնագանձումը տարածվել է Ստեփանյանների համատեղ ամուսնական կյանքի ընթացքում ձեռք բերված սեփական բնակարանի ու գույքի վրա: Սակայն ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանը, այնուհետեւ վճռաբեկ դատարանը, քննության առնելով գործն այս տեսանկյունից, վերացել են Ստեփանյանների բնակարանի նկատմամբ հայցվորների սեփականության իրավունքը ճանաչելու վճիռը: Բողոքարկումների միջեւ ընկած ժամանակահատվածում հայցվորները հասցրել էին վաճառել բնակարանը, սակայն բնակարանի հանդեպ հայցվորների սեփականությունը չճանաչելու հետեւանքով առուվաճառքի գործարքն անվավեր է համարվել: ՀՀ քաղ. գործերով վերաքննիչ դատարանը բնակարանի նոր սեփականատերերին օրինակելի ձեռքբերող չի ճանաչել, իսկ վճռաբեկ դատարանը կողմերին հաշտության առաջարկ է արել:

Առայժմ դատական ակտով ճանաչվել է բնակարանի մի կեսի նկատմամբ Սոնյա Ստեփանյանի սեփականության իրավունքը, որպես համատեղ ձեռք բերված գույքի, իսկ ամուսնու սեփականություն հանդիսացող մասը նա պարտադրված է գիջել հայցվոր կողմին՝ նրանց չհիմնավորված պահանջի դիմաց: Սակայն նախնական հաջողությունից ոգեւորված հայցվոր կանայք ստացածը հետ տալու ոչ մի ցանկություն չունեն եւ առայժմ չեն համակերպվում անգամ Ս. Ստեփանյանին իր սեփականությունը վերադարձնելու փաստի հետ՝ մոռանալով, որ դատարանը ճանաչել է բնակարանի մի կեսի նկատմամբ նրա սեփականության իրավունքը, իսկ մյուս կեսը գնելու նախապատվության իրավունքը նրան տրված է օրենքով:

ՍՈՆՅԱ ՄԱՍՈՒՐՅԱՆ
www.hetq.am

Միջազգային

Բայբուրթյանը Շեւարդնաձեից նեղացած չէ

«Վրաստանի հայերի միության» փոխնախագահ, «Վրաստան» հայալեզու շաբաթաթերթի խմբագիր եւ խորհրդարանի պատգամավոր Վան Բայբուրթյանը, արձագանքելով **«Ազգի»** նախորդ համարի «Վան Բայբուրթյանը պատժվեց» հրապարակմանը, ասաց, որ ինքը շարունակում է մնալ նախագահ էդ. Շեւարդնաձեի համախոհը եւ նեղացած չէ կառավարմես «Հանուն նոր Վրաստանի» կուսակցությունից:

Վիրահայության ամենաակտիվ ներկայացուցիչ Բայբուրթյանը չի ընդգրկվել «Հանուն նոր Վրաստանի» նախընտրական դաշինքի ընտրացուցակում եւ, ըստ էության, կորցնում է իր տեղը Վրաստանի նոր խորհրդարանում:

Բայբուրթյանը չցանկացավ պատասխանել, թե ինչո՞ւ չի ընդգրկվել կառավարմես նախընտրական դաշինքի ընտրացուցակում:

«Կարեւոր եմ համարում նոյեմբերի 2-ին կայանալիք խորհրդարանական ընտրություններում «Հանուն նոր Վրաստանի» դաշինքի հաղթանակը, որպեսզի

Մշակույթ

Գիտաժողով «Թարգմանչաց օրերին»

Գրողների միջազգային P.E.N. ընկերակցության Հայկական կենտրոնի կազմակերպությամբ «Թարգմանչաց տոնին» նվիրված գիտաժողովը տեղի ունեցավ Երեւանում հոկտեմբերի 10-13-ը: Գիտաժողովի կազմակերպմանն աջակցել էին ԵՊՀ ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետը, Հայաստանի գրողների միությունը, ԳԱԱ գրականության ինստիտուտը:

1921 թ. Լոնդոնում կին արձակագիր Դաուսոն Սթոֆի կողմից հիմնադրված P. E. N. (poets, essayists, novelists) ընկերակցությունն այսօր աշխարհի 100 երկրներում ունի 130 կենտրոն եւ շուրջ 15.000 անդամ: Ընկերակցությունը ստանձնել է գեղարվեստական գրականության միջոցով ազատ խոսքի տարածման առաքելություն, աշխարհի տարբեր ազգությունների գրողներին միավորելու ճանապարհով՝ անկախ նրանց ռասայական, կրոնական պատկանելությունից, քաղաքական համոզմունքներից ու գաղափարախոսություններից:

Հայկական P. E. N. կենտրոնը ստեղծվել է 1991 թ. (առաջին նախագահ՝ բանաստեղծ Գեւորգ Էմին, 1998-ից՝ թարգմանչուհի Աննա Հակոբյան), այս տարիներին իրագործելով մի շարք ծրագրեր, կազմակերպել է նաեւ գիտաժողովներ: Ուրբաթ օրը մեկնարկած եռօրյա գիտաժողովն անցավ «Պոեզիայի աղագան թարգմանությունների միջոցով» խորագրի ներքո: Գիտաժողովի բացումը կատարվեց ԵՊՀ բանասիրական ֆակուլտետի Ե. Չարենցի անվան դահլիճում Աննա Հակոբյանի ելույթով, որին հետեւեց ԵՊՀ պրոռեկտոր Արամ Սիմոնյանի ողջույնի խոսքը:

Միջազգային P. E. N. ընկերակցության գլխավոր քարտուղար Թերրի Քարլբոմը ներկայացրեց P. E. N.-ի նպատակներն ու առաքելությունը՝ դառնալ համաշխարհային այնպիսի օղակ, որը համախմբի աշխարհի գրողներին՝ պաշտպանելու նրանց ստեղծագործական ազատությունները: «Մեր համերաշխությունը որեւէ խմբակցության համերաշխություն չէ, այլ մտահոգ եւ հոգածու անհատների՝ անցողիկ աշխարհի եւ անցողիկ քաղաքակրթությունների նկատմամբ համերաշխություն է» ասաց նա:

Գիտաժողովը ողջունեցին ՀՀՄ նախագահ Լեւոն Անանյանը, ԳԱԱ գրականության ինստիտուտի տնօրեն Ազատ Եղիազարյանը, Հակոբ Կրկաշարյանը՝ Փարիզից, սենեգալցի բանաստեղծուհի տիկ. Ֆաթու Նդիեյ Սոուն եւ այլք:

«Անի» հյուրանոցի սրահներից մեկում գիտաժողովի առաջին նիստը վարեց ԵՊՀ արտասահմանյան գրականության ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտ. պրոֆ. Հենրիկ Էդոյանը՝ հանդես գալով «Թարգմանությունն իբրեւ անհատների եւ մշակույթների երկխոսության ձեւ» թեմայով: Գրականությունը դիտելով իբրեւ հոգու միասնությանը եւ ձեւի բազմազանությանը միսված գործընթաց, անդրադարձավ ժամանակային եւ տարածական ինֆորմացիաներին, անցյալի եւ ներկայի մշակութային փոխազդեցություններին եւ այս ընդհանուր համատեքստում՝ թարգմանության դերին:

Բանասիրական գիտությունների դոկտ. պրոֆ. Լեւոն Եգեկյանի ելույթն առնչվում էր ճշմարիտ, ճգրիտ (բառացի) թարգմանությանը, հատկապես այն դժվարություններին, որոնց հանդիպում է թարգմանիչը մասնավորապես դարձվածների պարագայում (իբրեւ լեզվական այն միջավայրի, որն առավել է արտահայտում տվյալ ժողովրդի ազգային մտածողությունը, սովորույթը, բարքերը): Այս թեմայի շարունակությունը մեկ այլ հարթությամբ ներկայացրին ԵՊՀ ռոմանագերմանական ֆակուլտետի անգլիական բանասիրության ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտ. պրոֆեսորներ Սեդա Գասպարյանը եւ Ավիկ Իսահակյանը:

Գիտաժողովին այդ օրը իր ողջույնը բերեց ՀՀ-ում Ֆրանսիայի դեսպան պրն Անրի Կյունին:

«Թարգմանչաց տոնի» առիթով հոկտեմբերի 12-ին գիտաժողովի մասնակիցները ՀՅ միության եւ P. E. N. հայկական կենտրոնի կազմակերպությամբ համատեղ միջոցառում ունեցան Օշականում Սբ. Մաշտոց դպրատանը: ՀՅՄ քարտուղար Հովիկ Հովեյանը խորհրդանշական եւ եզակի համարեց «Թարգմանչաց տոնի» հայկական բնույթը, ինչի մասին վկայեցին նաեւ արտերկրյա հյուրերը: Սպա ՀՅՄ սահմանած ամենամյա «Կանթեղ» մրցանակը եւ 500-ական ԱՄՆ դոլար հանձնեց Սիմոն Կրկաշարյանին՝ հին հունարենից կատարած բազմամյա թարգմանական բեղուն գործունեության եւ Իրանի Իսլամական Հանրապետության Սպահանի պետհամալսարանի հայագիտական ամբիոնի դասախոս, բանաստեղծ Ազատ Մաթյանին՝ Գրիգոր Նարեկացու «Մայյան ողբերգության» թարգմանության համար: Ելույթ ունեցան ռուս մտավորականները, սենեգալցի բանաստեղծուհին, P. E. N.-ի գլխավոր քարտուղար Թերրի Քարլբոմը: Օրը հարուցարին Լիդա Գեւորգյանը եւ Ալբերտ Սկրտչյանը՝ ներկայացնելով իրենց «ընտանեկան պատարագից» մի հատված, պատառիկ Նարեկացու «Մայյանից» (ասմունքն ընթացավ հոգեւոր երգերի ուղեկցությամբ): Իրենց ստեղծագործությունները կարդացին ՀՅՄ մանկապատանեկան «Ցոլքեր» գրական ստուդիայի սաները:

P. E. N. ընկերակցության գիտաժողովը շարունակվեց Սբ. Մաշտոց դպրատան վերնահարկում: Նիստը վարեց բանասիրական գիտությունների դոկտ. պրոֆ. Արտեմ Հարությունյանը՝ սկսելով ակադեմիականությունից իսպառ զերծ բանաստեղծախառն մի ելույթով: Թարգմանությունն իբրեւ հեռախուզություն, թարգմանիչը՝ լրտես. այս ձեւակերպմամբ բանախոսը թարգմանությունը համարեց նաեւ գաղտնի պայքար եւ ընդվզում, որովհետեւ թարգմանությունը սոսկական ընտրություն չէ, այլեւ որոշակի միտում ոչ միայն գրական ճաշակի, այլեւ քաղաքացիական հասարակարգի ձեւավորման եւ մարդու ազատության համար:

Հետաքրքրությամբ լսվեցին բանասիրական գիտությունների թեկնածու Անուշ Սեդրակյանի, Սլովակիայից Գուստավ Մուրինի եւ բանասիրական գիտությունների դոկտ. պրոֆ. Կառլեն Մաշինյանի ելույթները, որը մասնավորապես անդրադարձավ Գյոթեի հայերեն թարգմանությունների մի շարք նրբերանգներին:

Կիրակի օրը «Անի» հյուրանոցում շարունակվեցին ելույթները, քննարկումները, գնահատականները: Գիտաժողովն ավարտվեց երեկոյան պոեզիայի ընթերցմամբ:

Սույն գիտաժողովի նշանակության եւ օգտակարության գնահատականը թողնելով մասնակիցներին, մաղթենք, որ հետագայում ուշադրության արժանանան նաեւ կենցաղավարության որոշ հարցեր, ինչպես նաեւ կենցաղավարության որոշ մանրամասները (մեր կարծիքով՝ ոչ անկարեւոր), ասենք, նրբանկատությունը եւ քաղաքավարությունը. չէ՞ որ P. E. N.-ը իր գործունեությամբ միսված է քաղաքացիական հասարակարգի ձեւավորման եւ անհատի ազատությանը, այն էլ՝ գեղարվեստական խոսքի միջոցով:

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԳԱԼՅԱՆ

ԳՈՆ ԱՍԿԱՐՅԱՆԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ

«Ֆիլմ ընկալելն ազգային հարց չէ»

Ասում է կինոռեժիսորը

Հոկտեմբերի 17-22-ը «Նաիրի» կինոթատրոնում կցուցադրվեն կինոռեժիսոր Դոն Ասկարյանի ֆիլմերը եւ լուսանկարները: Ֆիլմերից երեքը՝ «Երաժիշտները», «Հին հռոմեական ճանապարհին» եւ «Փարաջանով», որ հիմնականում վերջին տարիների աշխատանքներ են, Հայաստանում առաջին անգամ են ներկայացվում:

Ծնունդով արցախցի այս ռեժիսորն իր կյանքի մեծ մասն անց է կացրել արտասահմանում, բայց հիմնականում ստեղծագործել է ազգին ու ժողովրդին հարազատ թեմաներով: «Դոն Ասկարյանը ստեղծում է այնպիսի ֆիլմեր, որոնք հետաքրքրում են իր հարազատ երկրի պատմությունն ու ոգին», 2002-ին գրել է Հարվարդի «Սինեմատիկա»-ն: Իր իսկ ֆիլմերի մասին պրն Ասկարյանն ասում է. «Իմ այս ֆիլմերը հայկական հիմք, նյութ ունեն, բայց դա ոչինչ չի սահմանափակում: «Արջը» ֆիլմից բացի բոլորը հայկական թեմաներով են: Ունեմ հնդկական, ռուսական թեմաներով ֆիլմեր, որոնք այստեղ ներկայացված չեն»:

Իր աշխատանքն արտասահմանցիներին ներկայացնելու եւ նրանց ընկալման մասին կինոռեժիսորն ասում է. «Կարծում եմ՝ ֆիլմ ընկալելը ազգային հարց չէ, այն կինոյի հարց է: Ազգայինը սկզբում է ինչոր դեր խաղում, բայց կինո ընկալելու համար մարդ պետք է կինոյից բան հասկանա, կինո պետք է սիրի: Կինոն աշխատում է կինեմատոգրաֆի տերմիններով, ոչ թե ազգային: Չկա հատուկ հայկական օպերատորի աշխատանք, այն կամ լավն է, կամ վատը: Մարդ կարող է շատ լավ հայրենասեր լինել, բայց վատ օպերատոր ունենալ»:

Հաջորդ ֆիլմը, որ կինոռեժիսորը կցանկանար տեսնել Էկրանին, «Սուրբ Ղազար»-ն է:

ԹԱՄԱՐ ՄԻՆԱՍՅԱՆ

ԵՐԵՎԱՆՅԱՆ ՅՈՒՅԱՍՐԱՀՇԵՐՈՒՄ

Խաչը՝ տաք, արեւ, համաստեղություն



Խաչը տիեզերական մոդել է, տիեզերքի մասին մեր պատկերացումը, որ դարձել է մեր ինքնության, մեր աշխարհընկալման խորհրդանիշը: Հայոց մեջ, ի տարբերություն այլ քրիստոնյա ժողովուրդների, առավել տարածված է խաչի պատկերումը: Պատկերների պատկերումը հայ եկեղեցում հիմնականում հանգել է խաչին եւ Քրիստոսին: VII-VIII դդ.-ից սկսած սրբապատկերների պատկերումի հայկականացված ձեւը դարձել է խաչապատկերությունը:

Գուցե սա է պատճառը, որ Էդվարդ Խանոյանն ինքն էլ չհասկացավ, թե ինչպես 1998 թ.-ից սկսեց խաչեր նկարել: «Ինքնաբերաբար, առանց նախօրոք մտածելու սկսում եմ թղթի վրա գծանկարել: Վերջում տեսնում եմ, որ խաչ եմ նկարել: Կարծում եմ, իմ նկարած խաչերը կոդ են, որ մի օր պիտի կարդացվեն: Սա վերեւից տրված շնորհ է: Հիմա ձեզ հետ խոսում եմ, իսկ գիծը գալիս է մտքիս մեջ, եւ ուզում եմ թուղթ ու մատիս վերցնել», ասում է Էդվարդ Խանոյանը: Նրա կարծիքով, ինչպես խաչը, այնպես էլ Նարեկացու «Մայյան ողբերգությունը» առեղծվածային են, հոգեւոր բազմաթիվ գաղտնիքներ, խորհուրդներ ունեն: Այդ իսկ պատճառով ժողովրդական արվեստի թանգարանում իր առաջին խաչապատում-ցուցահանդեսը նա նվիրել է Նարեկացու «Մայյանի» 1000-ամյակին:

Էդվարդ Խանոյանը մոտ 700 խաչ է նկարել: Դրանք գունային, գծային տարբեր լուծումներով շատ գեղեցիկ խաչեր են, որոնցից ոչ մեկը մյուսին նման չէ: Կարծում եմ, ոսկերիչները, արծաթագործները կարող են Էդվարդ Խանոյանի խաչի մանրանկարներով հրաշալի գործեր ստեղծել: Ա. Ա.

«ԱԶԳ»-ԻՆ ՀՅՈՒՐ

Ազգանպաստ գործունեություն



Այս տարի Հայագիտական առաջին համաժողովի ժամանակ հետաքրքրական զեկուցումներից մեկն Իրանի Ազատ իսլամական համալսարանի պրոֆեսորի օգնական Անդրանիկ Սիմոնյանինն էր: Մեզ հարեւան երկրի մշակույթի հետ միայն վերջին ժամանակներս ենք մենք կարողացել փոխհարստացնել լիարժեքորեն շփվել: Հայ-իրանական մշակութային կապերի ամրապնդման համար այս առումով կարեւոր գործ է անում Անդրանիկ Սիմոնյանը:

1984-89 թթ. Անդրանիկ Սիմոնյանը սովորել է Երեւանի պետական համալսարանում, որն ավարտելուց հետո, 1990-95 թթ. դասավանդել է ԵՊՀ հայոց լեզվի եւ իրանական լեզուների բաժիններում, միաժամանակ ՀՀ ԳԱԱ լեզվաբանության ինստիտուտում Գեւորգ Ջահուկյանի ղեկավարությամբ պատրաստել է գիտական թեզ, որը պաշտպանել է 1995-ի հունիսին (թեման կենտրոնական Իրանի հայկական բարբառներն էր):

Նույն ժամանակ վերադառնում է Իրան եւ արժանանում Իրանի կրթության նախարարության «Գնահատման թերթիկի», որը հնարավորություն է տալիս զբաղվելու գիտամանկավարժական գործունեությամբ:

1997 թ.-ից սկսում է աշխատել Ազատ իսլամական համալսարանի հայոց լեզվի եւ գրականության բաժնում՝ դասավանդելով գրաբար, լեզվաբանություն, նոր եւ հին հայ գրականություն, համեմատական քերականություն:

2001 թ. Իրանի նախագահի հրամանով Անդրանիկ Սիմոնյանին շնորհվում է «Ընտիր հետազոտող» կոչումը: Նույն տարում Թեհրանում անցկացված ժողովրդագրության միջազգային երկրորդ սեմինարին զեկուցում է ներկայացնում Իրանի եւ Կովկասի երկրների ժողովրդագրության վերաբերյալ, որն արժանանում է բարձր գնահատականի:

Դեռեւս Երեւանում սովորելու տարիներին Անդրանիկը համագործակցել է Հայաստանում Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանատան հետ, իսկ սկսած 1995-ից՝ գիտական 25 կենտրոնների հետ:

Անդրանիկ Սիմոնյանը գիտամանկավարժական գործունեությանը զուգընթաց մեծ աշխատանք է տանում իրանահայ համայնքում՝ հանդիսանալով Իրանահայերի կրթական եւ ազգային մարմինների հոգաբարձուների խորհրդարանի անդամ:

Ազգանպաստ գործունեություն է ծավալել Անդրանիկ Սիմոնյանը, որը տարեցտարի առավել արդյունավետ է աշխատում: Հույս ունենք, որ այդ գործունեությունը նոր, ավելի արդյունավետ ձեւեր կընդունի:

Ս. ՄԵԼՔՈՆՅԱՆ

Ժողովրդական երգեր երեխաների կատարմամբ

Հայ մանուկների երգերը միշտ էլ հետաքրքրությամբ են լսվում, սփյուռքի երեխաներինը՝ առավել եւս: Բայց մանկական որեւէ լավ երգչախումբ ղեկավարելու եւ նույնիսկ կոմիտասի եւ Ներսես Շնորհալու երգերով խտասալիկ թողարկելու համար անհրաժեշտ է ունենալ մասնագետ Հայկ Սարգսյանի տաղանդն ու համբերությունը:

Այս տարվա ամռանը Փարիզի Ռենի շրջանի դպրոցական վարժարանի բարեկամ հայ տիկնանց միությունը թողարկեց «Դալիլո» անունը կրող խտասալիկ, որի վրա ձայնագրված երգերը կատարում են Դպրոցասերի երեխաները, որոնց երբեմն օժանդակում են ուրիշ կատարողներ: Փարիզի «Աշխարհ» թերթը գրում է, որ երեխաների կատարմամբ ձայնագրված հայկական ժողովրդական երգերի այդ սկավառակը պարունակում է հայ երգարվեստի գեղեցիկ նմուշներ եւ կարող է լավ նվեր լինել երաժշտասերների համար:

Պ. Բ.

ԹԱՂՐԱՆԿԱՐՉԻ ԱՉՔԵՐՈՎ

ՀՀ հավաքականը թույլ ու անօգնական էր

Հայաստան-Իսպանիա՝ 0-4 (0-1)

11 հոկտեմբերի, Երեւան, «Հանրապետական» մարզադաշտ, 16 հազար հանդիսական:

Մրցավար՝ Ուրս Մեյեր (Շվեյցարիա):

Հայաստան-Ռոման Բերեզովսկի, Եղիշե Մելիքյան, Կարեն Դոխոյան, Սարգիս Հովսեփյան, Հարություն Վարդանյան, Ռոմիկ Խաչատրյան, Մարիան Ջեչիու (Խոսե Բիլիբիո, 89), Արթուր Ոսկանյան (Անդրեյ Մովսիսյան, 79), Ալբերտ Սարգսյան, Արտավազդ Քարամյան, Արման Քարամյան (Արթուր Պետրոսյան, 88):

Իսպանիա-Իկեր Կասիլյաս, Միչել Սալգադո, Կառլոս Մարչենա, Դավիթ Ալբելդա, Կառլոս Պույոլ, Իվան Հելգիերա, Ռաուլ (Ալբերտ Լուկե, 79), Ռուբեն Բարախա (Խավի Ալոնսո, 65), Խուան Կառլոս Վալերոն, Վիսենտե (Խոսե Ռեյես, 61), Խոսեբա Էչեվերիա:

Գոլերը խփեցին Վալերոնը (7), Ռաուլը (75), Ռեյեսը (88, 92):

Զգուշացվեցին Խաչատրյանը (44), Արման Քարամյանը (49), Սարգսյանը (71):

Իսպանիայի հավաքականի հետ հանդիպումով ՀՀ հավաքականն ավարտեց իր մրցելույթները Եվրոպայի առաջնության ընտրական մրցաշրջանում: «Հանրապետական» մարզադաշտում հնչած ավարտական ակորդը հիասթափություն պատճառեց ֆուտբոլասերներին: Հայաստանի ընտրանին իր դժգույն խաղով խոշոր հաշվով պարտվեց իսպանացիներին: Եվ եթե չլիներ Բերեզովսկու վստահ խաղը, որը մի քանի անգամ փրկեց թիմին վերահաս գոլերից, ապա մեր հավաքականը պարզապես խայտառակ հաշվով կպարտվեր, թեեւ բաց թողած 4 գոլերն էլ չեն կարող պատիվ բերել մեր ֆուտբոլիստներին:

Ինչ խոսք, Իսպանիայի հավաքականն իր խաղամակարդակով զգալիորեն գերազանցում է մեր ընտրանուն: Եվ իսպանացիներն իրենց իրական հնարավորությունները դրսեւորեցին հատկապես առաջին խաղակեսում: Արդեն 7-րդ րոպեին աջ թեւով էչեվերիայի սլացիկ անցումից հետո տուգանային հրապարակում հսկողությունից դուրս մնացած Վալերոնը բացեց հաշիվը: Այդ դրվագում մեր պաշտպանները դիտորի դերում էին: Առաջ անցնելով նշենք, որ նրանք անփույթ խաղացին, չկարողացան չեզոքացնել հյուրերի խաղադաշտում: «Հանրապետական» մարզադաշտում հնչած ավարտական ակորդը հիասթափություն պատճառեց ֆուտբոլասերներին: Հայաստանի ընտրանին իր դժգույն խաղով խոշոր հաշվով պարտվեց իսպանացիներին: Եվ եթե չլիներ Բերեզովսկու վստահ խաղը, որը մի քանի անգամ փրկեց թիմին վերահաս գոլերից, ապա մեր հավաքականը պարզապես խայտառակ հաշվով կպարտվեր, թեեւ բաց թողած 4 գոլերն էլ չեն կարող պատիվ բերել մեր ֆուտբոլիստներին:

Ինչ խոսք, Իսպանիայի հավաքականն իր խաղամակարդակով զգալիորեն գերազանցում է մեր ընտրանուն: Եվ իսպանացիներն իրենց իրական հնարավորությունները դրսեւորեցին հատկապես առաջին խաղակեսում: Արդեն 7-րդ րոպեին աջ թեւով էչեվերիայի սլացիկ անցումից հետո տուգանային հրապարակում հսկողությունից դուրս մնացած Վալերոնը բացեց հաշիվը: Այդ դրվագում մեր պաշտպանները դիտորի դերում էին: Առաջ անցնելով նշենք, որ նրանք անփույթ խաղացին, չկարողացան չեզոքացնել հյուրերի խաղադաշտի գավոր հարվածները: Ընդհանուր առմամբ մեր ֆուտբոլիստների գործողություններում բացակայում էր հստակությունը, միմյանց փոխադարձումը: Մեր թիմը թույլ ու անօգնական տեսք ուներ: Եվ դեռ լավ է, որ իսպանացիներն իրենց ամբողջ ուժով չխաղացին, չդրսեւորեցին ողջ կարողությունները, այլապես մեր հավաքականն ավելի խոշոր հաշվով ջախջախիչ պարտություն կկրեր: Ընդմիջումից հետո իսպանացիներն առանձնապես ակտիվություն չդրսեւորեցին, նահանջեցին եւ հնարավորություն ընձեռեցին դաշտի տերերին ազատ գործելու, գրոհներ կազմակերպելու: Իսկ իրենք հարմար առիթը բաց չթողեցին վտանգավոր հակագրոհներ կազմակերպելու, որոնք հիանալի կերպով եզրափակեցին: Այո, իսպանացիներն իրենց դրսեւորեցին որպես իսկական պրոֆեսիոնալներ՝ վարպետության հիանալի դաս տալով ՀՀ հավաքականին:

Տարօրինակ էր մամուլի ասուլիսում ՀՀ հավաքականի գլխավոր մարզիչ Միխայ Ստոյկիցայի այն հայտարարությունը, թե խաղի հաշիվը չի համապատասխանում իրականությանը, որ դա պատահականություն էր: Կամ այն, որ եթե Իսպանիայում լիներ, նման դեպքերում մարզիչը պետք է հրաժարական տար: Ստացվում է, որ Հայաստանում կարելի է խոշոր հաշվով պարտվել, դժգույն խաղ ցուցադրել, սակայն պատասխանատվություն չկրել:

Ցավալի է, որ հայտնվել ենք նման իրավիճակում: Ընտրական այս մրցափուլը ցույց տվեց, որ Հայաստանի հավաքականի կազմում արդեն հասունացել է սերնդափոխության պահը: Կան ֆուտբոլիստներ, ովքեր տարիներ շարունակ մշտապես հրավիրվում են ազգային հավաքական, սակայն նրանց օգտակար գործողության գործակիցը շատ ցածր է: Հավաքականի կազմավորման հարցով պետք է շատ լուրջ զբաղվել, այլապես ընտրական հաջորդ մրցափուլում էլ կհայտնվենք նույն «կոտրած տաշտակի» առջեւ:

ՎԻՃԱԿԱՀԱՇԻՎ

Ուղեգրերի համար պայքարողները որոշվեցին

Հոկտեմբերի 13-ին Ֆրանկֆուրտում կայացած վիճակահանությունն անվանեց Եվրո-2004-ի եզրափակիչ փուլի ուղեգրերի համար անցկացվելիք անցումային խաղերի մասնակից զույգերին:

Ազգային հավաքականներ
Լատվիա-Թուրքիա
Շոտլանդիա-Հոլանդիա
Խորվաթիա-Սլովենիա
Ռուսաստան-Ուելս
Իսպանիա-Նորվեգիա

Երիտասարդական հավաքականներ
Գերմանիա-Թուրքիա
Պորտուգալիա-Ֆրանսիա
Դանիա-Նորվեգիա
Իտալիա-Սերբիա եւ Չեռնոգորիա
Բելառուս-Լեհաստան
Շվեդիա-Իսպանիա
Շվեյցարիա-Չեխիա
Խորվաթիա-Շոտլանդիա

Խաղերը կկայանան նոյեմբերի 15-16 եւ 18-19-ին:

Այալան երկարաձգել է պայմանագիրը «Վալենսիայի» հետ

Արգենտինացի պաշտպան Ռոբերտո Այալան 2 տարով երկարաձգել է պայմանագիրը «Վալենսիայի» հետ: Այսպիսով, Այալան մնում է «Վալենսիայում» եւ նրան իր թիմում տեսնելու «Ռեալի» նախագահի հույսերը չիրականացան: Այալան իսպանական ակումբ էր տեղափոխվել 2000 թ. «Միլանից»: Նրա համար իսպանացիները 4 մլն եվրո էին վճարել: Այդ ժամանակից ի վեր 30-ամյա ֆուտբոլիստը զգալի առաջընթաց է արել՝ համարվելով Եվրոպայի լավագույն պաշտպաններից մեկը: Ընթացիկ մրցաշրջանում Այալան վնասվածքի պատճառով դեռեւս խաղադաշտ դուրս չի եկել:

Ուղեգրերից տասի տերերը հայտնի են

Ֆուտբոլի Եվրոպայի 2004 թ. առաջնության ընտրական մրցաշարն ավարտվեց: Հայտնի դարձան Պորտուգալիայում կայանալիք եզրափակիչ փուլի 10 մասնակիցները: Այդ բախտին արժանացան Ֆրանսիայի, Շվեդիայի, Չեխիայի, Բուլղարիայի, Դանիայի, Գերմանիայի, Հունաստանի, Անգլիայի, Իտալիայի եւ Շվեյցարիայի հավաքականները: Եվս 10 ընտրանիներ կշարունակեն պայքարը եզրափակիչում թափուր մնացած 5 տեղերի համար: Ավարտական տուրում ամենամեծ հետաքրքրություն ներկայացնող Թուրքիա-Անգլիա հանդիպումը պետք է որոշեր ընտրական 7-րդ խմբի հաղթողին: Թուրքերին միայն հաղթանակ էր անհրաժեշտ, մինչդեռ անգլիացիներին բավարարում էր նույնիսկ ոչ-ոքի արդյունքը: Համառ մրցապայքարում անցած մրցախաղն ավարտվեց անգլիացիներին ձեռնտու ոչ-ոքի արդյունքով, ընդ որում Անգլիայի հավաքականը մոտ էր հաջողությանը, սակայն Բեքհեմը չիրացրեց 11 մ հարվածը:

2-րդ խմբում վճռորոշ դարձավ Բոսնիա-Դանիա հանդիպման արդյունքը: Ոչ-ոքին դանիացիներին ուղեգիր պարգեւեց, իսկ բոսնիացիներին զրկեց նույնիսկ 2-րդ տեղը գրավելու հնարավորությունից: 5-րդ խմբում հաղթողի հարցը վճռվեց Գերմանիայի եւ Իսլանդիայի հավաքականների մրցավեճում: Գերմանացիները հաղթեցին 3-0 հաշվով, իսկ 2-րդ տեղը գրավեց Շոտլանդիայի ընտրանին, որն իր հերթին պարտություն էր մատնել լիտվացիներին (1-0): Իններորդ խմբից ուղեգիր նվաճեցին իտալացիները: Իրենց երկրպագուներին հաճելի անակնկալ մատուցեցին հույները՝ նվաճելով եզրափակիչի ուղեգիրը:

Ահա ավարտական տուրի հանդիպումների համառոտ վիճակագրությունը.

Ֆրանսիա-Իսրայել՝ 3-0 (3-0)
Անրի (9), Տրեզեգե (25), Բումսոնգ (43):
Կիպրոս-Սլովենիա՝ 2-2 (0-2)
0-1, 0-2՝ Շիլյակ (12, 42), 1-2՝ Ս. Գեորգիու (74), 2-2՝ Յասումի (84):
Նորվեգիա-Լյուքսեմբուրգ՝ 1-0 (1-0)
Ֆլու (18):
Բոսնիա-Դանիա՝ 1-1 (1-1)
0-1՝ Յորգենսեն (12), 1-1՝ Բոլիչ (39):
Հեռացվեց Գրավեսենը (90, Դանիա):
Ավստրիա-Չեխիա՝ 2-3 (0-1)
0-1՝ Յանկուլովսկի (27), 1-1՝ Խաաս (51), 2-1՝ Իվանշիչ (77), 2-2՝ Վախուշեկ (79), 2-3՝ Կոլեր (92):
Հեռացվեց Շոմը (64, Ավստրիա):
Հոլանդիա-Մոլդովա՝ 5-0 (1-0)
Կլույվերս (43), Սնեյդեր (51), վան Հոյդոնկ (74՝ 11 մ), վան դեր Վարս (80), Ռոբեն (89):
Հունգարիա-Լեհաստան՝ 1-2 (0-1)
0-1՝ Նեջելյան (10), 1-1՝ Շաբիչ (48), 1-2՝ Նեջելյան (62):
Շվեդիա-Լատվիա՝ 0-1 (0-1)
Վերպակովսկի (22):
Հեռացվեց Զիրնիսը (72, Լատվիա):
Շոտլանդիա-Լիտվա՝ 1-0 (0-0)
Ֆլետչեր (70):
Գերմանիա-Իսլանդիա՝ 3-0 (1-0)
Բալլակ (9), Բոբիչ (59), Կուրանի (79):
Հունաստան-Հս. Իռլանդիա՝ 1-0 (0-0)
Ցարտաս (69՝ 11 մ):
Հեռացվեց Մաքարտնին (68, Հս. Իռլանդիա):
Հայաստան-Իսպանիա՝ 0-4 (0-1)
Վալերոն (7), Ռաուլ (75), Ռեյես (88, 92):
Լիխտենշտեյն-Սլովակիա՝ 0-2 (0-1)
Վիտեկ (40, 56):
Թուրքիա-Անգլիա՝ 0-0
37-րդ րոպեին Բեքհեմը չիրացրեց 11 մ հարվածը:
Խորվաթիա-Բուլղարիա՝ 1-0 (0-0)
Օլիչ (48):
Բելգիա-Էստոնիա՝ 2-0 (1-0)
Պիրոյա (44՝ ինքնագոլ), Բուֆֆել (60):
Իտալիա-Ադրբեջան՝ 4-0 (2-0)
Վիերի (16), Ինձագի (24, 88), Դի Վայո (65):
Ուելս-Սերբիա՝ 2-3 (1-1)
0-1՝ Վուկիչ (4), 1-1՝ Խարտսոն (26՝ 11 մ), 1-2՝ Միլոշեւիչ (82), 1-3՝ Լյուբոյա (87), 2-3՝ Իոնշոու (92):
Ռուսաստան-Վրաստան՝ 3-1 (2-1)
0-1՝ Իաշվիլի (3), 1-1՝ Բուլիկին (29), 2-1՝ Տիտով (45), 3-1՝ Սիչով (73):
Շվեյցարիա-Իռլանդիա՝ 2-0 (1-0)
Խ. Յակին (6), Ֆրայ (60):

Ռմբարկուները

Շիլյակ	Սլովենիա	8
Անրի	Ֆրանսիա	6
Վիլտոր	Ֆրանսիա	6
Տրեզեգե	Ֆրանսիա	6
Ինձագի	Իտալիա	6
Կոլեր	Չեխիա	6
Օուեն	Անգլիա	6լ

Մրցաշարային աղյուսակներ

1-ին խումբ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Ֆրանսիա	8	8	0	0	29-2	24
2. Սլովենիա	8	4	2	2	15-12	14
3. Իսրայել	8	2	3	3	9-11	9
4. Կիպրոս	8	2	2	4	9-18	8
5. Մալթա	8	0	1	7	5-24	1

2-րդ խումբ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Դանիա	8	4	3	1	5-9	15
2. Նորվեգիա	8	4	2	2	9-5	14
3. Ռումինիա	8	4	2	2	21-9	14
4. Բոսնիա	8	4	1	3	7-8	13
5. Լյուքսեմբ.	8	0	0	8	0-2	10

3-րդ խումբ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Չեխիա	8	7	1	0	23-5	22
2. Հոլանդիա	8	6	1	1	20-6	19
3. Ավստրիա	8	3	0	5	12-14	9
4. Մոլդովա	8	2	0	6	5-19	6
5. Բելառուս	8	1	0	7	4-20	3

4-րդ խումբ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Շվեդիա	8	5	2	1	19-3	17
2. Լատվիա	8	5	1	2	10-6	16
3. Լեհաստան	8	4	1	3	11-7	13
4. Հունգարիա	8	3	2	3	15-9	11
5. Սան Մար.	8	0	0	8	0-3	0

5-րդ խումբ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Գերմանիա	8	5	3	0	13-4	18
2. Շոտլանդ.	8	4	2	2	12-8	14
3. Իսլանդիա	8	4	1	3	11-9	13
4. Լիտվա	8	3	1	4	7-11	10
5. Ֆարերներ	8	0	1	7	7-18	1

6-րդ խումբ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Հունաստան	8	6	0	2	8-4	18
2. Իսպանիա	8	5	2	1	16-4	17
3. Ուկրաինա	8	2	4	2	11-10	10
4. Հայաստան	8	2	1	5	7-16	7
5. Հս. Իռլան.	8	0	3	5	0-8	3

7-րդ խումբ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Անգլիա	8	6	2	0	14-5	20
2. Թուրքիա	8	6	1	1	17-5	19
3. Սլովակիա	8	3	1	4	11-9	10
4. Մակեդոնիա	8	1	3	4	11-14	6
5. Լիխտենշ.	8	0	1	7	2-22	1

8-րդ խումբ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Բուլղարիա	8	5	2	1	13-4	17
2. Խորվաթիա	8	5	1	2	12-4	16
3. Բելգիա	8	5	1	2	11-9	16
4. Էստոնիա	8	2	2	4	4-6	8
5. Անդորրա	8	0	0	8	1-18	0

9-րդ խումբ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Իտալիա	8	5	2	1	17-4	17
2. Ուելս	8	4	1	3	13-10	13
3. Սերբիա	8	3	3	2	11-11	12
4. Ֆինլանդ.	8	3	1	4	9-10	10
5. Ադրբեջան	8	1	1	6	5-20	4

10-րդ խումբ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Շվեյցարիա	8	4	3	1	15-11	15
2. Ռուսաստան	8	4	2	2	19-12	14
3. Իռլանդիա	8	3	2	3	10-11	11
4. Ալբանիա	8	2	2	4	11-15	8
5. Վրաստան	8	2	1	5	8-14	7

Էջը պատրաստեց
ԱՐՈՍ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

ԱԶԳԱՅԻՆ ԴՊՐՈՑՆԵՐ

Ջավախքում փլվել է եւս երկու դպրոց

ԱԽԱԼՔԱԼԱՔ, 11 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ԱՐԻՆՖՈ: Ջավախքում այս ուսումնական տարում փլվել է եւս երկու դպրոց: Ախալքալաքի շրջանի Դիլիսկայի թիվ 2 միջնակարգ դպրոցի շենքը փուլ է եկել ամբողջությամբ, դպրոցի դասերն սկիզբ առած են անցկացնելու գյուղի թիվ 1 դպրոցում, երրորդ հերթով: Իսկ ահա Նինոծմինդայի շրջանի Գանձայի Վահան Տերյանի անվան թիվ 1 միջնակարգ դպրոցի շենքը, որն արդեն երկար տարիներ համարվում էր վտանգավոր վթարային, փուլ է եկել մասամբ: Ուսումնական գործընթացը շարունակելու համար դասերը մի քանի հերթով անցկացվում են դպրոցի դեռեւս կանգուն մասում:

Իրկուտսկի մարզի դպրոցներում շուտով հայոց լեզու կդասավանդեն

Իրկուտսկի քաղաքապետին առընթեր համակարգիչ խորհրդի աշխատանքային խորհրդակցությունում քննարկվել են Իրկուտսկում ազգային դպրոցներ ստեղծելու եւ գոյություն ունեցողներին օժանդակելու հարցերը: Ռուսաստանի հարավի հայերի «Երկրամաս» թերթը գրում է, որ մարզի ազգային մշակութային կենտրոնները եւ համայնքները դժգոհ են հարկաբաժինների, որակյալ մանկավարժների, ազգային դպրոցների դասավանդման արտոնագրված մեթոդիկաների եւ ֆինանսավորման համակարգերի բացակայությունից:

Ազգային լեզուները հանրակրթական դպրոցներում կարող են դասավանդվել Իրկուտսկի կրթության վարչությունում դասավանդման ծրագրերի հաստատման դեպքում: Թերթին հայտնի է դարձել, որ Իրկուտսկի վարչակազմն արդեն հավանություն է տվել հայոց լեզվի դասավանդման ծրագրերին, որոնք շուտով ներկայացվելու են հիշյալ վարչությանը:

ՎԵՐԱՄԻԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Ստեղծվեց Հայաստանի միավորված կոմունիստական կուսակցությունը

ԵՐԵՎԱՆ, 11 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Հայաստանի նորացված կոմունիստական, Հայաստանի «Կոմունիստների միություն» եւ Հայաստանի կոմունիստական ուղղվածության ինտելեկտուալների կուսակցություններն այսօր գումարած համատեղ համագումարում միավորվեցին՝ ստեղծելով Հայաստանի միավորված կոմունիստական կուսակցությունը:

Երեք կուսակցությունների ղեկավար մարմինների ներկայացուցիչներն իրենց զեկուցումներում կարեւորեցին միավորման այս քայլը սոցիալիստական երկիր կառուցելու ճանապարհին՝ անդրադառնալով համարելով այն հանգամանքը, որ Հայաստանում կոմունիստական գաղափարախոսությունը մի քանի կուսակցությունների կողմից է ներկայացվում: Նրանց խոսքերով, միավորման գործընթացն այսօր չի ավարտվում, այն կշարունակվի այնքան ժամանակ, մինչեւ որ մեկ կուսակցության մեջ համախմբվեն բոլոր կոմունիստները: Ըստ նորացված կոմունիստական կուսակցության կենտկոմի առաջին քարտուղար Յուրի Մանուկյանի, կուսակցությունների միավորումը ուժերի ցուցադրության ստուգաստես չէ, այլ՝ քաղաքական քայլ, քաղաքական համոզմունքի, հաստատակամության ներդրում՝ «մոբիլիզացնելու կոմունիստական ուժերին սոցիալիզմի համար տարվող պայքարը թեժացնելու համար»: «Մենք գալիս ենք ոչ թե անհատների, մի խումբ մարդկանց շահերը պաշտպանելու, այլ մասսաների, զանգվածների խնդիրները լուծելու համար», ասաց նա:

Համագումարն ընտրեց հանձնաժողով՝ ՀՄԿԿ ծրագիրն ու կանոնադրությունը մշակելու համար: Այն նաեւ առաջարկություններ կներկայացնի կուսակցության կենտկոմի ու վերստուգիչ հանձնաժողովի կազմի վերաբերյալ: Մինչեւ կուսակցության ղեկավար մարմինների ձեւավորումը, կուսակցության ղեկավարությունը կստանձնի համագումարի նախագահությունը, որի կազմում են նաեւ երեք կուսակցությունների առաջնորդները:

Ինչ վերաբերում է նոր կուսակցության ղեկավար մարմնի ձեւավորմանը, ապա, օրինակ, ՀՆԿԿ քարտուղար Հրանտ Ոսկանյանը կողմ է համանախագահության սկզբունքին:

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

Դրամավարկային տեղեկատու

Հոկտեմբերի 3-9-ն ընկած ժամանակահատվածում դրամավարկային ցուցանիշները հետեւյալն էին.

Դրամական բազա, դրամական զանգված

Փողի բազան նվազել է 723 մլն դրամով եւ հոկտեմբերի 9-ին կազմել 103 մլրդ 908 մլն դրամ: Զուտ արտաքին ակտիվները (առանց սեփականաշնորհման միջոցների) նվազել են 217 մլն դրամով, իսկ զուտ ներքին ակտիվները՝ 506 մլն դրամով:

Սեպտեմբերի 27-ից հոկտեմբերի 3-ն ընկած ժամանակահատվածում փողի զանգվածը նվազել է 2 մլրդ 113 մլն դրամով եւ հոկտեմբերի 3-ին կազմել 213 մլրդ 707 մլն դրամ (ընդգրկված են 20 բանկերի ցուցանիշները): Շրջանառության մեջ կանխիկ դրամը նախորդ շաբաթվա համեմատ աճել է 1 մլրդ 995 մլն դրամով եւ կազմել 84 մլրդ 418 մլն դրամ: Դրամով ցպահանջ ավանդները նվազել են 2 մլրդ 639 մլն դրամով եւ կազմել 27 մլրդ 742 մլն դրամ: Ժամկետային, խնայողական եւ արտարժութային ավանդները նվազել են 1 մլրդ 470 մլն դրամով եւ կազմել 101 մլրդ 547 մլն դրամ: Արտարժույթով ավանդները նվազել են 1 մլրդ 190 մլն դրամով եւ կազմել 88 մլրդ 722 մլն դրամին համարժեք արտարժույթ: Ընդ որում, արտարժութային ցպահանջ ավանդները կազմել են 42 մլրդ 68 մլն դրամ (նախորդ շաբաթվա համեմատ նվազել են 1 մլրդ 692 մլն դրամով), ժամկետայինները՝ 46 մլրդ 653 մլն դրամ (աճ՝ 501 մլն դրամ):

Ֆինանսական շուկա

Հոկտեմբերի 3-9-ն ընկած ժամանակահատվածում տեղաբաշխվել են 600 մլն դրամի 41-շաբաթյա ՊՊ՝ 10.2433 տոկոս տարեկան եկամտաբերությամբ, - մարվել 600 մլն դրամի 41-շաբաթյա ՊՊ՝ 15.3786 տոկոս տարեկան եկամտաբերությամբ:

Նշված ժամանակահատվածում ԿԲ-ը ներգրավել է 1 մլրդ 600 մլն դրամի ավանդ՝ տարեկան 5 տոկոս տոկոսադրույքով եւ մարել 900 մլն դրամի ավանդ՝ տարեկան 5 տոկոս տոկոսադրույքով:

Արտարժույթի շուկա

Հոկտեմբերի 3-9-ն ընկած ժամանակահատվածում ԱՄՆ դոլարի նկատմամբ դրամն արժեվորվել է 0.67 տոկոսով՝ 570.93 դրամից հասնելով 567.12 դրամի:

Նշված ժամանակահատվածում արժութային շուկայում իրականացվել են շուրջ 34,116 հազ ԱՄՆ դոլարի առք ու վաճառքի գործարքներ, որոնց միջին կշռված փոխարժեքը կազմել է 571.23 դրամ:

Շաբաթվա ընթացքում ԿԲ-ը վաճառել է 2 մլն 300 հազ ԱՄՆ դոլար՝ 567.12 դրամ փոխարժեքով:

ՀՀ ԿԲ մամուլի ծառայություն

ՀՀ Կենտրոնական բանկը 14.10.2003 թ. ժ. 9:00-ից սահմանում է արտարժույթի հետեւյալ հաշվարկային փոխարժեքները ու գնման եւ վաճառքի հետեւյալ գները

ISO-ի կոդը	Միավոր	Արտարժույթ	Հաշվարկային փոխարժեք	Գնում	Վաճառք
USD	1	ԱՄՆ դոլար	566.78	561.10	572.40
EUR	1	եվրո	662.45	658.50	666.40
RUR	1	ռուս. ռուբլի	18.75	17.60	19.90

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ի հիշեցում

«Սիրիուս» ԲԲԸ կողմից հրապարակված ծանուցումների տեղեկացնում ենք, որ «Սիրիուս» ԲԲԸ-ի հոկտեմբերի 13-ին, ժամը 15.00-ի վերակազմակերպմամբ պայմանավորված կանոնադրության մեջ փոփոխությունների կատարման համար ժողովը քվորումի բացակայության պատճառով չի կայացել:

Այն տեղի կունենա ս/թ հոկտեմբերի 24-ին, ժամը 15.00-ին, Ք. Աբովյան, Է. Պետրոսյանի 1, «Սիրիուս» ԲԲԸ-ի վարչական շենքում: Նույն օրակարգով՝ Օրակարգ:

«Սիրիուս» ԲԲԸ վերակազմակերպման հետեւանքով ընկերության կանոնադրությունում փոփոխությունների հաստատում:

Հարգանքներով՝

գլխ. տնօրեն՝ Մ. ՊՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ս. թ. հունիսի 10-ին մահացել է Կոտայքի մարզի Նոր Հաճըն քաղաքի Իսահակյան փողոցի թիվ 5 շենքի թիվ 37 բնակարանի բնակիչ Գալինա Սլոտինան: Շահագրգիռ անձանց խնդրում ենք ներկայանալ եղվարդի տարածքային նոտարական գրասենյակ:

ՆՈՐ ՀԱՃԸՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը, Երեւանի քաղաքապետարանը, ՀՀ Առեւտրաարդյունաբերական պալատը եւ «Ագրոբիզնեսի Զարգացման Կենտրոն» ՓԲԸ-ն 2003 թ. հոկտեմբերի 20-23-ը ՀՀ կառավարության նիստերի մեծ դահլիճում (Ք. Երեւան, Մ. Ա. դամյանի փողոց 1) կազմակերպում են

«ԱՐՄՊՐՈԴԷՔՍՊՈ - 2003»
Երրորդ միջազգային ցուցահանդեսը,

որտեղ կցուցադրվեն Հայաստանի Հանրապետության սննդի արդյունաբերության լավագույն արտադրատեսակները: Ցուցահանդեսին կմասնակցեն արտադրական ձեռնարկություններ, արտասահմանյան եւ տեղական առեւտրական եւ գովազդային կազմակերպություններ, զանգվածային լրատվական միջոցներ: Ցուցահանդեսին հրավիրում ենք մասնակցելու բոլոր շահագրգիռ կազմակերպություններին:

Մանրամասն տեղեկությունների համար դիմել «Ագրոբիզնեսի զարգացման կենտրոն»: Հեռախոսներ՝ 277-647, 277-621: Ցուցահանդեսի հանդիսավոր բացման արարողությունը կկայանա հոկտեմբերի 20-ին, ժամը 12:00-ին:

Հայաստանում անկախ տպագիր լրատվամիջոցներին աջակցելու գործունեության շրջանակներում՝ Եվրասիա հիմնադրամը, Բաց Հասարակության Ինստիտուտի մասնակցությամբ, հայտարարում է մրցույթ, որն ուղղված է

Հայաստանում Մամուլի Տարածման Գործընթացի Բարելավմանը

Այս նպատակով Հիմնադրամը հրավիրում է մամուլի տարածման բնագավառում գործող մասնավոր ընկերություններին եւ այլ շահագրգիռ կազմակերպություններին ներկայացնել մրցույթին մասնակցելու իրենց ցանկությունը հաստատող նամակ, որը պիտի պարունակի կազմակերպության անվանումը, գրանցման տվյալները եւ ղեկավարի անուն/ազգանունը:

Մրցույթին կարող են մասնակցել՝

1. Մամուլի տարածման ոլորտում գործող ընկերություններ
2. Համապատասխան իրավական գրանցում ունեցող ոչ պետական կազմակերպություններ կամ մասնավոր ընկերություններ, որոնց գործունեությունն առնչվում է տպագիր մամուլի հետ:

Ներկայացված նամակների հիման վրա, Հիմնադրամը կհրավիրի բոլոր հավակնորդներին մասնակցելու սեմինար-խորհրդաժողովներին, որոնց հիմնական նպատակն է ծանոթացնել մասնակիցներին բիզնես առաջարկների կազմման եւ հայտերի ներկայացման կարգի հետ:

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար դիմել Եվրասիա հիմնադրամի Երեւանյան գրասենյակ, հետեւյալ հասցեով՝
Երեւան, Դեմիրճյան 4, հեռ/ֆաքս (3741) 56-54-78; 58-60-59; 58-61-59. E-mail: eurasia@eurasia.am:
Նամակների ներկայացման վերջին ժամկետն է՝ հոկտեմբերի 21, 2003, ժ 16:00:
Սեմինար-խորհրդաժողովների վերաբերյալ մասնակիցները լրացուցիչ կտեղեկացվեն:

Մրցույթը ֆինանսավորվում է ԱՄՆ-ի Միջազգային Զարգացման Գրասենյակի եւ Բաց Հասարակության Ինստիտուտի կողմից:

For Your Internal News of Armenia Log on to
www.azg.am
In English, Russian, Armenian and Turkish

«Գինդ» տպագրատուն, Երեւան, Բագրատունեաց 70ա Գրանցման թիւ 65. Դասիչ 69150. Տպաքանակը՝ 3000 Ստորագրված է տպագրության՝ 13. 10. 2003 Գինը՝ 100 դրամ